ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 30 ապրիլի 2026 թվականի

COM(2026) 168 վերջնական փաստաթուղթ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԶԵԿՈՒՅՑ

Հայաստանի կողմից Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ առաջին ընթացիկ զեկույց

1. Ամփոփ նկարագիր

Հայաստան-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսությունը մեկնարկել է 2024 թվականի սեպտեմբերին: Հանձնաժողովի կողմից այնուհետեւ Անդամ պետությունների փորձագետների աջակցությամբ 2025 թվականի փետրվարին եւ ապրիլին Հայաստան կատարած երկու ճանաչողական այցերի ընթացքում պատրաստվել է Վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը (ՎԱԳԾ): ՎԱԳԾ-ն այնուհետեւ 2025 թվականի նոյեմբերին Հանձնաժողովի կողմից հանձնվել է Հայաստանի իշխանություններին:

Սույն գործողությունների ծրագրով նախատեսվում են խորքային բարեփոխումներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ i) ճամփորդական փաստաթղթերի անվտանգությունը, ii) սահմանների, միգրացիայի եւ ապաստանի վերաբերյալ հարցերի կառավարումը, iii) հասարակական կարգի եւ անվտանգության վերաբերյալ հարցերը, եւ iv) ազատ տեղաշարժին առնչվող հիմնարար իրավունքների հարցերը: Վիզաների ազատականացման երկխոսությունը շարունակվելու է, քանի դեռ այն անհրաժեշտ լինի սահմանված բոլոր հենանիշերը կատարելու համար:

ԵՄ առաջին գնահատման առաքելությունն իրականացվել է Երեւանում 2025 թվականի դեկտեմբերին Անդամ պետությունների փորձագետների, Հանձնաժողովի ծառայությունների, Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության, «Ֆրոնտեքս»-ի եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից՝ գնահատելու Հայաստանի գրանցած առաջընթացը ՎԱԳԾ-ի հենանիշերի կատարման գործում: Ուշադրություն է դարձվել հենանիշերի առաջին խմբին (1-ին փուլ), որն ընդգրկում է ՎԱԳԾ-ով նախատեսված քաղաքականության բոլոր ուղղություններում օրենսդրական եւ քաղաքական շրջանակը:

Հանձնաժողովի առաջին ընթացիկ զեկույցը հիմնված է ԵՄ գնահատման առաքելության եզրակացությունների եւ Հայաստանի իշխանությունների տրամադրած տեղեկությունների վրա: Այն կենտրոնանում է ՎԱԳԾ-ում

ընդգրկված հենանիշերի առաջին խմբի վրա, ինչպես նկարագրված է վերեւում: Ընդհանուր առմամբ Հանձնաժողովի սույն առաջին ընթացիկ զեկույցով եզրակացնում են, որ Հայաստանի իշխանություններն ամուր քաղաքական հանձնառություն են դրսեւորել ՎԱԳԾ-ով ակնկալվող բարեփոխումների իրականացման հարցում: Չնայած այն փաստին, որ ՎԱԳԾ-ն միայն վերջերս է ներկայացվել Հայաստանին, անհրաժեշտ բարեփոխումներից շատերը նախաձեռնվել կամ պլանավորվել են Հայաստանի իշխանությունների կողմից:

Հանձնաժողովը սույն զեկույցի եզրակացությունները կներկայացնի Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին: Այս եզրակացությունները կներկայացվեն եւ կքննարկվեն նաեւ Հանձնաժողովի կողմից Հայաստանի իշխանությունների հետ բարձրաստիճան պաշտոնատար անձանց հաջորդ հանդիպման ընթացքում: Հանձնաժողովը կշարունակի մշտադիտարկել ՎԱԳԾ-ի չորս հիմնական ուղղություններով սահմանված բոլոր հենանիշերի կատարումը՝ ԵՄ անդամ պետությունների փորձագետների աջակցությամբ: Այդ նպատակով առաջիկայում Հայաստանում կկազմակերպվեն ԵՄ գնահատման լրացուցիչ առաքելություններ: Հանձնաժողովի կողմից պարբերաբար կհրապարակվեն ընթացիկ զեկույցներ: Հանձնաժողովը եւ Խորհուրդը մանրակրկտորեն կուսումնասիրեն հենանիշերի առաջին խմբի կատարման առաջընթացը՝ հենանիշերի երկրորդ խմբի գնահատումը (փուլ 2) սկսելու վերաբերյալ համաձայնության հասնելու նպատակով: Հենանիշերի այս երկրորդ խմբով ուսումնասիրվելու է բարեփոխումների իրականացումը:

Հանձնաժողովը կշարունակի աջակցել Հայաստանին ՎԱԳԾ-ի իրականացման գործում, այդ թվում՝ Հայաստանի կայունության եւ աճի ծրագրի շրջանակներում հատուկ տեխնիկական եւ ֆինանսական աջակցության տրամադրման մեկնարկի միջոցով:

2. Ընդհանուր տեղեկություններ

ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները հիմնված են Համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) վրա, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 1-ին: 2025 թվականի դեկտեմբերի 2-ին ԵՄ-Հայաստան գործընկերության խորհուրդը ՀԸԳՀ-ի շրջանակներում ընդունել է ԵՄ-Հայաստան գործընկերության նոր ռազմավարական օրակարգ՝ սահմանելով հավակնոտ առաջնահերթություններ եւ նախատեսելով տեղաշարժի եւ մարդկանց միջեւ շփումների առնչությամբ համագործակցության հստակ փոխհամաձայնեցված շրջանակ:

Խորհրդի կողմից 2024 թվականի հուլիսին հաստատվելուց հետո 2024 թվականի սեպտեմբերի 9-ին Երեւանում մեկնարկել է ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ վիզաների ազատականացման երկխոսությունը: Խորհուրդը 2025 թվականի հոկտեմբերին հաստատել է Հանձնաժողովի կողմից Հայաստանի համար ներկայացված վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը (ՎԱԳԾ)՝ սահմանելով այն առանցքային հենանիշերը, որոնք պետք է կատարվեն Հայաստանի կողմից մինչեւ Հայաստանի քաղաքացիներին առանց վիզայի ԵՄ մեկնելու հնարավորության տրամադրումը: ՎԱԳԾ-ն Հայաստանի իշխանություններին է հանձնվել 2025 թվականի նոյեմբերի 5-ին: ԵՄ-ն վիզաների ազատականացման երկխոսության հետ կապված բարեփոխումներին աջակցում է Հայաստանի դիմակայունության եւ աճի ծրագրի միջոցով, որի մասին 2024 թվականի ապրիլին հայտարարել է նախագահ Ֆոն դեր Լայենը:

ՎԱԳԾ-ն կառուցված է չորս հիմնական ուղղության շուրջ, մասնավորապես՝ 1) փաստաթղթերի անվտանգություն, ներառյալ՝ կենսաչափական համակարգ, 2) սահմանների համալիր կառավարում, միգրացիայի կառավարում եւ ապաստան, 3) հասարակական կարգ եւ անվտանգություն, եւ 4) արտաքին հարաբերություններ եւ հիմնարար իրավունքներ: Այն նաեւ պարունակում է հենանիշերի երկու աստիճան. առաջին փուլում հենանիշերի խումբն ուղղված է օրենսդրական եւ քաղաքական շրջանակին: Հենանիշերի այս առաջին խումբը

ճանապարհ կհարթի ավելի կոնկրետ հենանիշերի կատարման համար, որոնցով երկրորդ փուլում կուսումնասիրվի համապատասխան միջոցառումների արդյունավետ եւ կայուն իրականացումը:

2014 թվականի հունվարի 1-ից ԵՄ քաղաքացիներն ազատված են Հայաստան այցելելու համար վիզայի պահանջից:

Որպես առաջին աստիճանական քայլ դեպի ապագա՝ առանց վիզայի ճամփորդությունների ուղղությամբ՝ 2014 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտել ԵՄ-Հայաստան վիզաների դյուրացման համաձայնագիրը: Նույն օրը կիրառելի է դարձել նաեւ ԵՄ-Հայաստան հետընդունման համաձայնագիրը: Այս երկու համաձայնագրերը, որոնց արդյունավետ կատարումը մշտադիտարկվում է երկու մասնագիտացված համատեղ կոմիտեների կողմից, շարունակաբար կատարվում են բավարար կերպով: Հայաստանի քաղաքացիներին տրամադրվող Շենգենյան վիզաների թիվը, ինչպես նաեւ այդ վիզաների տոկոսը, որոնք բազմակի մուտքի վիզաներ են, վերջին տարիներին կայուն կերպով աճել են: 2019 թվականին Հայաստանի քաղաքացիներին տրամադրվել է 51 000 Շենգենյան վիզա (որի 34.8%-ը եղել են բազմակի մուտքի վիզաներ), իսկ 2024 թվականին տրամադրվել է 86 300 Շենգենյան վիզա (որի 43.5%-ը եղել են բազմակի մուտքի վիզաներ): Սա վկայում է ԵՄ այցելությունների նկատմամբ հայերի աճող հետաքրքրության մասին: Վիզայի մերժման ցուցանիշը շարունակել է կայուն լինել՝ 2019 թվականին կազմելով 13.2%, իսկ 2024 թվականին՝ 12.4%, թեեւ ակնկալվում են լրացուցիչ ջանքեր՝ ապագայում վիզայի մերժման ցուցանիշն ավելի նվազեցնելու համար: ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ պահպանվում է հետընդունման եւ վերադարձի հարցերի շուրջ բավականին արդյունավետ համագործակցությունը, ինչպես հաստատվել է Հետընդունման հարցերով համատեղ կոմիտեի վերջին նիստում, որը տեղի է ունեցել 2025 թվականի հոկտեմբերի 9-ին: 2024 թվականին ԵՄ անդամ պետությունները Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերադարձի վերաբերյալ կայացրել են 3 105 որոշում, եւ փաստացի տեղի է

ունեցել 925 վերադարձ: 2025 թվականին[1] ԵՄ անդամ պետությունները Հայաստանի քաղաքացիների վերադարձի վերաբերյալ կայացրել են 3 200 որոշում, եւ փաստացի տեղի է ունեցել 1 310 հայերի վերադարձ դեպի Հայաստան: ԵՄ-ում անօրինական բնակվող՝ բերման ենթարկված Հայաստանի քաղաքացիների թիվը համեմատաբար կայուն է եղել՝ 2019 թվականին կազմելով 2 155, իսկ 2024 թվականին՝ 2 465: Այնուամենայնիվ, ԵՄ որոշ երկրներում Հայաստանի քաղաքացիների, մասնավորապես՝ բժշկական օգնություն հայցողների կողմից ներկայացված՝ ապաստան ստանալու վերաբերյալ չհիմնավորված դիմումների զգալի թիվը մարտահրավեր է, որը պետք է լուծում ստանա Հայաստանի իշխանությունների կողմից: 2024 թվականին 5 130 հայ ներկայացրել է ԵՄ-ում ապաստան ստանալու դիմում (2022 թվականին 5 240-ի համեմատ): Այնուամենայնիվ, ապաստան ստանալու համար դիմող հայերի այս միտումը զգալիորեն նվազել է 2025 թվականին[2]՝ հասնելով Հայաստանի քաղաքացիների կողմից ԵՄ-ում ներկայացված 3 535 դիմումի: Հայաստանի իշխանություններն ակնկալում են, որ Հայաստանի առողջության համընդհանուր ապահովագրության նոր համակարգը, որն ուժի մեջ է մտել 2026 թվականին, կնպաստի ապաստան ստանալու դիմումների թվի հետագա կրճատմանը:

3. Մեթոդաբանությունը

ՎԱԳԾ-ում նշված մեթոդաբանությանը համահունչ՝ Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին տեղեկացնի Հայաստանի կողմից ՎԱԳԾ-ի կատարման մասին: Սույն զեկույցն առաջին այդպիսի հաղորդակցությունն է:

Նաեւ սույն զեկույցը հրապարակվել է 2026 թվականի հունվարի 29-ին Հանձնաժողովի կողմից իր առաջին ԵՄ վիզային ռազմավարության[3] ընդունումից

[1] Եվրոստատի նախնական տվյալներ
[2] Եվրոստատի նախնական տվյալներ
[3] COM(2026) 43 վերջնական փաստաթուղթ

հետո, որն ուղղված է Շենգենյան գոտու անվտանգության եւ ամբողջականության ամրապնդմանը՝ միեւնույն ժամանակ դյուրացնելով բարեխիղճ ճամփորդությունները եւ բարձրացնելով ԵՄ-ի գլոբալ գրավչությունը: Սույն զեկույցը համահունչ է ԵՄ վիզային ռազմավարության սկզբունքներին:

2025 թվականի նոյեմբերին տեղի ունեցած՝ վիզաների ազատականացման երկխոսությունը մշտադիտարկող բարձրաստիճան պաշտոնատար անձանց հանդիպման ժամանակ Հայաստանի իշխանությունները ներկայացրել են ՎԱԳԾ-ի իրականացման ուղղությամբ արդեն իսկ ձեռնարկած միջոցները եւ պարզաբանել են իրենց ծրագրված հետագա քայլերը: Հայաստանը 2025 թվականի նոյեմբերի 30-ին ներկայացրել է ՎԱԳԾ-ի իրականացման վերաբերյալ իր առաջին ընթացիկ զեկույցը, որն այնուհետեւ թարմացվել է 2026 թվականի փետրվարի 27-ին: 2025 թվականի դեկտեմբերի 8-12-ը Երեւանում տեղի է ունեցել ԵՄ գնահատման առաքելությունը ԵՄ անդամ պետությունների, Եվրոպական հանձնաժողովի ծառայությունների, Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության, «Ֆրոնտեքս»-ի եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության փորձագետների մասնակցությամբ: Գնահատման առաքելության ուշադրության կենտրոնում է եղել ՎԱԳԾ-ի չորս հիմնական ուղղությունների հենանիշերի առաջին խմբի կատարումը: Այս գնահատման առաքելությունը նաեւ հիմնվել է 2025 թվականի փետրվարին եւ ապրիլին Հայաստանում ԵՄ անդամ պետությունների, Եվրոպական հանձնաժողովի ծառայությունների, Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության, «Ֆրոնտեքս»-ի եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության փորձագետների մասնակցությամբ անցկացված՝ ճանաչողական երկու առաքելությունների վրա, որոնց նպատակն էր տեղեկություններ հաղորդել ՎԱԳԾ-ի մշակման վերաբերյալ: Սույն զեկույցում ներառված փաստական տեղեկությունները հիմնված են այդ աղբյուրների վրա:

Սույն առաջին զեկույցը հետեւում է ՎԱԳԾ-ի կառուցվածքին: ՎԱԳԾ-ի չորս հիմնական ուղղությունների շրջանակներում զեկույցով գնահատվում է հենանիշերի առաջին խմբի կատարման առաջընթացը՝ կենտրոնանալով

օրենսդրական եւ քաղաքական շրջանակի վրա եւ անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնելով Հայաստանի իշխանություններին: Զեկույցի եզրափակիչ բաժնում ներկայացվում է ընդհանուր գնահատականը, եւ նախանշվում են հետագա քայլերը:

ՎԱԳԾ-ի կատարումը գնահատելիս Հանձնաժողովը նաեւ շարունակաբար կմշտադիտարկի Հայաստանում վիզայի մերժման ցուցանիշը, ԵՄ արտաքին սահմանին մուտք գործելու մերժում ստացած կամ ԵՄ-ում անօրինական բնակվող՝ ձերբակալված Հայաստանի քաղաքացիների թիվը, վերադարձի մասին որոշումների թիվը եւ Հայաստան վերադարձողների թիվը, Հայաստանի քաղաքացիների կողմից ԵՄ-ում ապաստան տրամադրելու մասին դիմումների թիվը, ինչպես նաեւ կատարման այլ համապատասխան ցուցանիշներ: Հանձնաժողովը նաեւ կտրամադրի Հայաստանի համար վիզայի հետագա ազատականացման արդյունքում ԵՄ-ի վրա միգրացիոն եւ անվտանգության հնարավոր ազդեցությունների գնահատում նախքան հենանիշերի երկրորդ խմբի գնահատմանն անցնելը, կենտրոնանալով իրականացման վրա: Հայաստանի իշխանություններին անհրաժեշտ կլինի բացահայտված հնարավոր ազդեցությունները վերացնել ՎԱԳԾ-ի իրականացման ընթացքում:

Առաջընթացը կգնահատվի կատարողականի վրա հիմնված մոտեցման միջոցով եւ պայմանավորված կլինի Հայաստանի կողմից ՎԱԳԾ-ով սահմանված բոլոր հենանիշերի արդյունավետ եւ հետեւողական իրականացմամբ: Այս գործընթացում ավտոմատություն չի լինի, եւ հենանիշերի առաջին խմբի կատարման առաջընթացը մանրամասն կուսումնասիրվի Հանձնաժողովի եւ Խորհրդի կողմից՝ հենանիշերի երկրորդ խմբի գնահատումն սկսելու վերաբերյալ համաձայնության հասնելու նպատակով:

Հանձնաժողովը 2018/1806 ԵՄ կանոնակարգում փոփոխություն կատարելու միջոցով Շենգենյան գոտի մեկնող Հայաստանի քաղաքացիների համար կարճաժամկետ վիզա ստանալու պարտավորության վերացման մասին Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին առաջարկություն ներկայացնելու

վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի կառնի նաեւ ԵՄ-Հայաստան ընդհանուր հարաբերությունները եւ վիզաների ազատականացման ցանկացած հնարավոր հետեւանք՝ ելնելով վերը նշված կատարողականի ցուցանիշների միտումներից:

«Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրով այս հարցերի համար սահմանված սովորական օրենսդրական ընթացակարգի համաձայն, հիմնվելով Հանձնաժողովի առաջարկության վրա, Եվրոպական պառլամենտը եւ Խորհուրդը որոշում կկայացնեն:

4. Հիմնական ուղղություն 1. Փաստաթղթերի անվտանգություն, ներառյալ՝ կենսաչափական համակարգ

- **Քաղաքացիական կացության եւ քաղաքացիական գրանցման գործընթացների ամբողջականությունն ու անվտանգությունն ապահովող իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում, այդ թվում՝ Հայաստանի բոլոր քաղաքացիների գրանցում բնակչության միասնական եւ անվտանգ էլեկտրոնային ռեգիստրում՝ ապահովելով տվյալների պաշտպանության ամենաբարձր չափանիշները:**

2025 թվականի հուլիսին Հայաստանն ընդունել է «Բնակչության պետական ռեգիստրի մասին» նոր օրենքը, որով սահմանվում է բնակչության պետական միասնական ռեգիստրի (ԲՊՌ)՝ որպես Հայաստանում անձի նույնականացման եւ ժողովրդագրական տվյալների միասնական ազգային աղբյուրի ստեղծման իրավական հիմքը: ԲՊՌ-ն նախատեսված է ապահովելու քաղաքացիական կարգավիճակի եւ բնակչության տվյալների ամբողջականությունը, հետեւողականությունը եւ հուսալիությունը՝ դրանով իսկ ամրապնդելով նույնականացման տվյալների կառավարումը, հանրային կառավարումը եւ ծառայությունների մատուցումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Շարունակվում են Հայաստանի ԲՊՌ-ի արդյունավետությունը եւ

համապատասխան այլ տվյալների շտեմարանների հետ փոխգործակցելիությունը բարելավելուն ուղղված տեխնիկական արդիականացումները:

Նախատեսվում է, որ Հայաստանի ԲՊՌ-ն ամբողջությամբ կգործի 2027 թվականի հունվարի 1-ից: Այն կընդգրկի Հայաստանի ամբողջ բնակչությունը, այդ թվում՝ Հայաստանի քաղաքացի չհանդիսացող անձանց, եւ հիմնված կլինի կյանքի այնպիսի իրադարձությունների համալիր գրանցման վրա, ինչպիսիք են ծնունդները, մահերը, ամուսնությունները եւ ամուսնալուծությունները: Բացի այդ, ԲՊՌ-ն կգործի որպես ինտեգրված հարթակ ըստ բնակության վայրի հաշվառման, հանրային ծառայությունների համարանիշների տրամադրման, ինչպես նաեւ անձի իրավաբանական կարգավիճակի գրանցման, այդ թվում՝ Հայաստանի քաղաքացիների, օտարերկրյա ռեզիդենտների, ապաստան հայցողների եւ փախստականների համար: Ակնկալվում է, որ գործարկումից հետո ԲՊՌ-ն կբավարարի համապատասխան չափանիշները եւ հիմնառանցք կհանդիսանա նույնականացման տվյալների անվտանգ կառավարման, փաստաթղթերի առավել բարձր անվտանգության եւ բնակչության ու միգրացիայի ապացուցահեն կառավարման համար:

- **Մեքենայաընթեռնելի կենսաչափական անձնագրերի տրամադրման իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում՝ ԻԿԱՕ-ի ամենաբարձր չափանիշներին եւ առաջարկվող գործելակերպերին լիակատար համապատասխանությամբ՝ հիմնվելով «մեկ անձ, մեկ փաստաթուղթ» սկզբունքի համաձայն նույնականացման տվյալների անվտանգ կառավարման (քաղաքացիական գրանցամատյան եւ պաշտոնական փաստաթղթեր) վրա, այդ թվում՝ դիվանագիտական եւ ծառայողական անձնագրերի առնչությամբ:**

Հայաստանի կառավարությունը 2023 թվականին հայտարարել է հանրային մրցույթ կենսաչափական նույնականացման համազգային համակարգի ներդրման համար՝ նույնականացման տվյալների կառավարման համակարգն

արդիականացնելու եւ երկրում փաստաթղթերի անվտանգության համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Մրցութային ընթացակարգի ավարտից հետո Հայաստանի ներքին գործերի նախարարությունը պետական-մասնավոր գործընկերության համաձայնագիր է կնքել «ՀայՓաս» ՓԲԸ-ի հետ՝ կենսաչափական նույնականացման նոր համազգային համակարգը մշակելու եւ կիրառելու նպատակով: Այս համակարգը Հայաստանի կողմից իր անձնագրային եւ անձը հաստատող փաստաթղթերի համակարգի ավելի լայն բարեփոխման անկյունաքարն է:

Նոր համակարգի պահանջների համաձայն՝ Հայաստանի կողմից տրված՝ անձը հաստատող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ նույնականացման քարտերը, անձնագրերը, կացության քարտերը, ճամփորդական փաստաթղթերը, ինչպես նաեւ դիվանագիտական եւ ծառայողական անձնագրերը, կպարունակեն կենսաչափական նույնականացուցիչներ եւ կհամապատասխանեն ԻԿԱՕ-ի 9303 փաստաթղթում սահմանված չափանիշներին եւ առաջարկվող գործելակերպերին: Այս նոր համակարգի շրջանակներում իրականացվող բարեփոխումը նախատեսված է փաստաթղթերի անվտանգության, փոխգործակցելիության եւ միջազգային ճանաչման բարձր մակարդակ ապահովելու համար:

Անձը հաստատող փաստաթղթերը եւ դրանց հետ կապված ընթացակարգերը կարգավորող իրավական դաշտի համապարփակ վերանայումն ընթացքի մեջ է: Ակնկալվում է, որ «մեկ անձ, մեկ փաստաթուղթ» սկզբունքը հստակ սահմանվելու եւ ամրագրվելու է օրենքում՝ այդպիսով բարձրացնելով իրավական որոշակիությունը եւ գործառական կայունությունը:

Երկրի հավաստագրերի կառավարման խնդիրը լուծելու համար Հայաստանը միանում է ԻԿԱՕ-ի ՀԲԵ/ՀԲՏ (Հանրային բանալիների ենթակառուցվածք/Հանրային բանալիների տեղեկատու) համակարգին, որը թույլ է տալիս վերբեռնել եւ ներբեռնել անհրաժեշտ թվային հավաստագրերը եւ տարածել դրանք այլ երկրներում: Համակարգի անհրաժեշտ ինտեգրումներն իրականացվելուց հետո Հայաստանի իշխանությունները սահմանային

ստուգումների ժամանակ կկարողանան ստուգել ԻԿԱՕ-ի ՀԲՏ-ի անդամ երկրների կողմից տրամադրված բոլոր անձնագրերի չիպերի իսկությունն ու վավերականությունը: Չիպով գործող ազգային նույնականացման քարտերի եւ անձնագրերի համար Հանրային բանալիների նույն ենթակառուցվածքի ինտեգրումը գործող համակարգերին կբարձրացնի փաստաթղթերի անվտանգությունը եւ ներքին ու արտաքին անվտանգությունը:

- **Միջազգային չափանիշներին համապատասխան՝ ԻԿԱՕ-ի չափանիշներին համապատասխանող կենսաչափական անձնագրերի (ներառյալ՝ արտերկրում գործող Հայաստանի հյուպատոսություններում) եւ ճամփորդական փաստաթղթերի (ներառյալ՝ քաղաքացի չհանդիսացող բոլոր անձանց համար նախատեսված ճամփորդական փաստաթղթերը, որոնք տարբերվում են սովորական ազգային ճամփորդական փաստաթղթերից) ամբողջական ներդրման եւ հին անձնագրեր՝ շրջանառությունից փուլային եղանակով ամբողջական հանման համար հստակ ժամկետի ընդունում:**

Նախատեսվում է, որ կենսաչափական նույնականացման նոր համակարգը, ինչպես նաեւ առաջին կենսաչափական նույնականացման քարտերն ու անձնագրերը, կգործարկվեն 2026 թվականի երկրորդ կեսին: Բարեփոխումը կտարածվի նաեւ արտերկրում գործող Հայաստանի դիվանագիտական առաքելությունների կողմից տրամադրվող ճամփորդական փաստաթղթերի վրա:

ԻԿԱՕ-ի չափանիշներին չհամապատասխանող անձնագրերը շրջանառությունից փուլային եղանակով հանելու վերջնաժամկետ դեռեւս չի սահմանվել:

- **Էթիկայի կանոնագրքի, կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ուսումնական ծրագրերի, ինչպես նաեւ պահանջների չկատարման դեպքում պատժամիջոցների, անձնական փաստաթղթերի անվտանգ**

կառավարման եւ տվյալների պաշտպանության համակարգի ներդրում պետական մարմինների այն պաշտոնատար անձանց համար, որոնք գործ ունեն անձնագրերի, նույնականացման քարտերի եւ պաշտոնական այլ փաստաթղթերի հետ:

Հայաստանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության աշխատակիցների վրա տարածվում են «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը եւ դրանից բխող՝ բարեվարքությանն առնչվող կարգավորումները: Թեեւ սույն օրենքով նաեւ հստակ իրավական հիմք է սահմանվում բարեվարքության եւ հաշվետվողականության համար, եւ Արդարադատության նախարարությունը ներդրել է բարեվարքության վերաբերյալ կանոնավոր ուսումնական դասընթացներ, ավելի քիչ ապացույցներ են առկա բարեվարքության խախտումները քննելու հատուկ գործառական ընթացակարգերի, կատարման արդյունքների համակարգված փաստաթղթավորման կամ քաղաքացիական կացության ակտերի գրանցման եւ փաստաթղթերի տրամադրման գործառույթներում առկա բարեվարքության եւ կոռուպցիոն ռիսկերի մեղմացման առնչությամբ կոնկրետ կանխարգելիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ:

Նոր թվային հարթակների կայուն աշխատանքին աջակցելու եւ տվյալների կառավարման ոլորտում լավագույն գործելակերպերի ներդրման նպատակով Հայաստանի միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունն աշխատանքի է ընդունել մասնագիտացված աշխատակիցների, որոնց հանձնարարված է մշակել եւ իրականացնել տվյալների կառավարման համապարփակ քաղաքականություն: Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը զուգահեռաբար եւ միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ իրականացնում է կարողությունների զարգացման թիրախային նախաձեռնություններ եւ տվյալների կառավարման ոլորտի ուսումնական ծրագրեր համապատասխան անձնակազմի համար:

Բացի այդ, Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը ներդրել է նաեւ մի շարք պարտադիր ուսումնական դասընթացներ, որոնք նվիրված են

փաստաթղթերի անվտանգությանը եւ նույնականացման տվյալների կառավարմանը: Այս ուսումնական նյութերը մշակվում են Ազգային անվտանգության ծառայության գործընկեր ստորաբաժանումների հետ համատեղ եւ նպատակաուղղված են եվրոպական լավագույն գործելակերպերին եւ տեղական գործառական պահանջներին համապատասխանության ապահովմանը:

Վերոնշյալ եզրակացությունների հիման վրա առաջարկվում է, որ Հայաստանի իշխանությունները ***փաստաթղթերի անվտանգության, ներառյալ՝ կենսաչափական համակարգի*** *(առաջին փուլ) հետ կապված 1-ին հիմնական ուղղության հենանիշերի առնչությամբ՝*

- *ապահովեն Բնակչության ապագա պետական ռեգիստրի համապատասխանությունը տվյալների ամբողջականության եւ անվտանգության միջազգային չափանիշներին,*
- *փուլային եղանակով շրջանառությունից հանեն բոլոր անձնագրերը, որոնք չեն համապատասխանում ԻԿԱՕ-ի չափանիշներին,*
- *տրամադրեն նույնականացման փաստաթղթերի չիպերի իսկորոշման վերաբերյալ հատուկ, շարունակական եւ ըստ դերերի մասնագիտացված ուսուցում բոլոր համապատասխան աշխատակիցների համար, որպեսզի նրանք ճշգրիտ մեկնաբանեն փաստաթղթերի ընթերցման հավելվածի միջոցով գեներացված արդյունքները,*
- *սկսեն ԻԿԱՕ-ի Հանրային բանալիների ենթակառուցվածքի/Հանրային բանալիների տեղեկատուի (ՀԲԵ/ՀԲՏ) համակարգին միանալու գործընթացը՝ այդպիսով հնարավորություն տալով ապահովելու էլեկտրոնային ճամփորդական փաստաթղթերի հուսալի ստուգման համար անհրաժեշտ՝ Երկրի ստորագրող հավաստագրման մարմնի եւ Փաստաթղթեր ստորագրող մարմնի հավաստագրերի անվտանգ վերբեռնում, վավերացում եւ տարածում,*

- *ստեղծեն հավաստագրերի կառավարման կենտրոնացված ենթակառուցվածք՝ ապահովելու համար թվային հավաստագրերի անվտանգ, հետեւողական եւ ժամանակին տարածումը փաստաթղթերի ստուգմանը եւ սահմանների հսկողությանը ներգրավված բոլոր իրավասու մարմիններին, այդ թվում՝ միգրացիոն ծառայություններին, սահմանային մարմիններին, մաքսային ծառայությանն ու ոստիկանությանը,*

- *իրականացնեն բարեվարքության ռիսկերի կանոնավոր գնահատումներ, որոնք ընդգրկում են պաշտոնական փաստաթղթերի հետ կապված գործընթացների բոլոր փուլերը, այդ թվում՝ տրամադրումը, ստուգումը, պահպանումը եւ SS համակարգերի մատչելիությունը,*

- *մշակեն հակակոռուպցիոն եւ բարեվարքության հարցերով պարտադիր ուսուցում բոլոր պաշտոնատար անձանց համար, որոնք ներգրավված են պաշտոնական փաստաթղթերի հետ կապված գործընթացներին, պարբերաբար թարմացվող փուլերով եւ կառուցվածքային հետագա քայլերով,*

- *գործարկեն ստանդարտ գործառական ընթացակարգեր անձնագրերի, նույնականացման քարտերի եւ պաշտոնական այլ փաստաթղթերի մշակման համար պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից հակաօրինական վարքագծի եւ բարեվարքության խախտումների դեպքերի մասին հաղորդելու, դրանք հայտնաբերելու եւ քննելու համար՝ ապահովելով արդյունավետ հաշվետվողականություն:*

5. Հիմնական ուղղություն 2. Սահմանների համալիր կառավարում, միգրացիայի կառավարում, ապաստան

5.1. Սահմանների համալիր կառավարում եւ վիզայի քաղաքականություն

- **Սահմանների կառավարման իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում՝ համաձայն ԵՄ եւ միջազգային չափանիշների, այդ թվում՝ տվյալների անվտանգության, ինչպես նաեւ սահմանների համապարփակ հսկողության առումով, ինչպես նաեւ սահմանների կառավարմանը ներգրավված բոլոր գերատեսչությունների միջեւ արդյունավետ միջգերատեսչական համագործակցության երաշխավորում:**

Վերջին երկու տարիների ընթացքում Հայաստանի ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) եւ դրա Սահմանապահ զորքերն (ՍԶ) աստիճանաբար ստանձնել են լրացուցիչ պատասխանատվություն Հայաստանում սահմանների հսկողության համար: Լիազորությունների շարունակական փոխանցման արդյունքում Հայաստանի սահմանապահ զորքերը լիակատար պատասխանատվություն են կրում Վրաստանի եւ Իրանի հետ սահմաններին գործող բոլոր անցակետերում, ինչպես նաեւ երկրի միջազգային օդանավակայաններում՝ սահմանների հսկողության համար: Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ պետական սահմանները շարունակում են փակ մնալ: Իրանի եւ Թուրքիայի հետ Հայաստանի կանաչ սահմանները 2025 թվականի հունվարից ի վեր համատեղ հսկում են ռուս սահմանապահները:

Հայաստանը պետք է դիտարկի միջգերատեսչական համագործակցության ամրապնդման եւ տեղեկությունների փոխանակման նպատակով հատուկ օրենսդրության նախապատրաստման հարցը, քանի որ դրանք կարեւոր նշանակություն կունենան սահմանների համալիր կառավարման (ՍՀԿ) հայեցակարգի բարեհաջող իրականացման համար: Ներկայումս երկրում սահմանների կառավարումը եւ դրա հետ կապված իրավապահ միջոցառումները շարունակում են հիմնականում տարանջատված լինել: Նշված ոլորտում գործող ազգային մարմինների միջեւ օպերատիվ հետախուզական տեղեկությունները չեն փոխանակվում համակարգված ձեւով, եւ յուրաքանչյուր մարմին հակված է ինքնուրույն միջամտել իր պատասխանատվության ոլորտում հայտնաբերված

իրավախախտումների մասով:

Նշված թերությունները շտկելու համար Հայաստանին անհրաժեշտ է ամրապնդել տեղեկությունների միջգերատեսչական փոխանակումն ու վերլուծական կարողությունները, այդ թվում՝ i) ռիսկերի համատեղ վերլուծության, ii) ռիսկերի պրոֆիլների, եւ iii) բարելավված մշտադիտարկման մշակման միջոցով: Այս համատեքստում, ռազմավարական անցումը ռեակտիվ արձագանքից դեպի հետախուզական տեղեկությունների վրա հիմնված ոստիկանության աշխատանքի մոդելին զգալիորեն կբարձրացներ սահմանների կառավարման եւ ներքին անվտանգության արդյունավետությունը:

- **Սահմանների համալիր կառավարման (ՍՀԿ) ազգային ռազմավարության եւ միջազգային չափանիշներին համապատասխան գործողությունների ծրագրի ընդունում, որոնք պարունակում են հստակ ժամկետներ, ռազմավարական եւ կոնկրետ նպատակներ, ինչպես նաեւ իրականացման միջոցառումներ, մանրամասն ուղենիշներ, կատարողականի ցուցանիշներ եւ վերահսկողության մեխանիզմներ՝ սահմանների եւ վերադարձի կառավարման ոլորտում օրենսդրության, կազմակերպչական, ենթակառուցվածքների, սարքավորումների, բավարար մարդկային եւ ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաեւ միջազգային համագործակցության հետագա զարգացման համար:**

Հայաստանի սահմանապահների դերակատարության ու պարտականությունների աճով պայմանավորված՝ կպահանջվի վերապատրաստման համակարգի համապատասխան բարեփոխում: Այդ բարեփոխումն անհրաժեշտ է ապահովելու համար սահմանների հսկողության ոլորտում մասնագիտական չափանիշների լիարժեք կիրառումն ու կայուն պահպանումը, մասնավորապես՝ հաշվի առնելով սահմանների համալիր

կառավարման մոդելի (ՍՀԿ) հետագա ներդրումը: Այս մոդելը պահանջում է ինտենսիվ գործառական համագործակցություն սահմանների կառավարման ոլորտում ներգրավված տարբեր մարմինների միջեւ, այդ թվում՝ սահմանապահների, ոստիկանության, միգրացիոն մարմինների եւ մաքսային ծառայության միջեւ:

Հայաստանի իշխանությունները մշակել են ապագա ՍՀԿ-ի վերաբերյալ հայեցակարգ, որը հավանության է արժանացել վարչապետի կողմից: Այդ հայեցակարգի հիմա վրա, ԵՄ աջակցությամբ, մշակվում են ՍՀԿ-ի 2026-2029 թվականների ռազմավարական ծրագրի եւ դրանից բխող միջոցառումների ծրագրի նախագծերը:

Սահմանապահ զորքերի միջեւ միջազգային համագործակցությունը դեռեւս գտնվում է վաղ փուլում: Ազգային անվտանգության խորհրդի եւ «Ֆրոնտեքս»-ի միջեւ աշխատանքային համաձայնագիրը գործում է 2012 թվականից: «Ֆրոնտեքս»-ի եւ Հայաստանի համապատասխան մարմինների միջեւ նոր աշխատանքային համաձայնագրի ընդունումը գտնվում է ընթացքի մեջ:

- **Կոռուպցիայի, ինչպես նաեւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի, հիմնարար իրավունքների պահպանման, սահմանների կառավարմանն առնչվող ուղղորդման եւ ապաստանի տրամադրման ընթացակարգերի եւ միգրանտների մաքսանենգ ճանապարհով տեղափոխման ու մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ էթիկայի կանոնագրքի եւ ուսումնական ծրագրերի ներդնում, որոնք մասնավորապես կներառեն ՍՀԿ-ին ներգրավված բոլոր ազգային մարմինները:**

Հայաստանի ազգային անվտանգության մարմինների անձնակազմի համար 2025 թվականի մայիսին ընդունված Վարքագծի կանոններով սահմանվում է իրավական շրջանակ, որը կիրառվում է նաեւ Սահմանապահ զորքերի անձնակազմի վրա եւ ընդգրկում է ինչպես ծառայության ընթացքում ցուցաբերվող

վարքագիծը, այնպես էլ ծառայությունից դուրս իրավիճակների լայն շրջանակ: Բացի այդ, 2026 թվականի փետրվարին Ազգային անվտանգության ծառայության կողմից Սահմանապահ զորքերի համար ԵՄ ուղեցույցների հիման վրա ընդունվել է վարքագծի առանձին եւ նոր կանոնագիրք:

Այս փաստաթղթերում ձեւակերպված են համահունչ եւ հետեւողական սկզբունքներ հանրային շահերի եւ օրինականության գերակայության, անաչառության եւ օբյեկտիվության, խտրականության բացառման, խոցելի անձանց նկատմամբ հարգանքի, հակակոռուպցիոն չափանիշների, ինչպես նաեւ պատշաճ մասնագիտական արտաքին տեսքի եւ վարքագծի վերաբերյալ: Այս փաստաթղթերի դրույթները, որոնք հասցեագրում են խոցելի անձանց նկատմամբ հարգալից վերաբերմունքը, բողոքների քննության ընթացակարգերը եւ խուզարկության սահմանափակումները, մանրամասն նկարագրված են եւ լավ համապատասխանեցված են սահմանների հսկողության հատուկ համատեքստին: Բացի այդ, Վարքագծի կանոնները պարունակում են կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ խիստ դրույթներ, այդ թվում՝ նվերների սահմանափակումներ եւ շահերի բախման վերաբերյալ պահանջներ, որոնք համահունչ են բարեվարքության ավելի լայն ազգային շրջանակին:

Հայաստանի ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնն իրականացնում է Սահմանապահ զորքերի աշխատակիցների կանոնավոր մասնագիտական ուսուցում եւ վերապատրաստում: Վերապատրաստումն իրականացվում է կարճաժամկետ դասընթացների, ինչպես նաեւ մինչեւ մեկ ամիս տեւողությամբ ավելի երկար ծրագրերի միջոցով, որոնք հաճախ անցկացվում են տեղում: Ըստ Հայաստանի իշխանությունների՝ 2026 թվականի կեսերից Սահմանապահ զորքերի ուսումնական ծրագրերում նախատեսվում է ներառել լրացուցիչ մոդուլներ, որոնք ընդգրկում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են կոռուպցիայի կանխարգելումը, ինչպես նաեւ թմրանյութերի ապօրինի շրջանառության, մաքսանենգության եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարը:

Զուգահեռաբար 2025 թվականի օգոստոսի 12-ին ընդունված՝ Մաքսային ծառայողի վարքագծի եւ էթիկայի կանոններով սահմանվում են մաքսային ծառայության անձնակազմի վարքագծի չափանիշները, այդ թվում՝ շահերի բախման, նվերների սահմանափակումների եւ գրանցամատյանների, գաղտնիության պահպանման պարտավորությունների եւ հանրության հետ հարաբերություններում վարքագծի վերաբերյալ: Այդ չափանիշները համապատասխանում են մաքսային մարմինների նկատմամբ կիրառելի՝ բարեվարքության միջազգային չափանիշներին:

2026-2029 թվականների հայեցակարգի նախագիծը, որը վերնագրված է «Սահմանապահ զորքերի կարողությունների զարգացում սահմանների համալիր կառավարման համակարգի շրջանակներում», արտացոլում է սահմանապահ զորքերի մտադրությունը՝ իրականացնելու բարեվարքությանն առնչվող բարեփոխումներ, բարձրացնելու թափանցիկությունն ու հաշվետվողականությունը, ներդնելու հակակոռուպցիոն միջոցառումներ, կիրառելու բարեվարքության եւ կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործիքներ եւ աուդիտի մեխանիզմներ:

Վերջապես, Հայաստանի միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունը Սահմանապահ զորքերի անձնակազմի հետ պարբերաբար անցկացնում է ուսուցման դասընթացներ եւ համակարգման հանդիպումներ եւ նախատեսում է համանման ուսումնական միջոցառումներ իրականացնել նաեւ ոստիկանության համապատասխան աշխատակիցների հետ: Այդ դասընթացների նպատակն է ապահովել ապաստանի տրամադրման եւ ուղղորդման ընթացակարգերի միատեսակ եւ հետեւողական կիրառումը սահմանների կառավարմանը ներգրավված բոլոր մարմիններում՝ այդպիսով ամրապնդելով համապատասխանությունը պաշտպանության միջազգային չափանիշներին: ԵՄ իրավապահ համակարգի վերապատրաստման մարմինը (ՈԵՔ) աջակցում է ազգային իշխանությունների ջանքերին՝ ուղղված իրավապահ ծառայությունների կարողությունները ԵՄ չափանիշներին եւ գործելակերպերին համապատասխան

զարգացնելուն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մարդու իրավունքները եւ միգրանտների մաքսանենգ ճանապարհով տեղափոխման եւ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարը: Սահմանապահ զորքերն անցնում են նաեւ ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից իրականացվող՝ փախստականների պաշտպանության միջազգային եւ ազգային չափանիշների վերաբերյալ ուսուցում: ՄԱԿ-ի գործակալությունն իրականացնում է սահմանային անցակետերում պաշտպանության կանոնավոր մշտադիտարկում՝ Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության եւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համագործակցությամբ:

5.2. Միգրացիայի կառավարում

- **Միգրացիոն քաղաքականության իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում՝ ԵՄ եւ միջազգային չափանիշներին համապատասխան, այդ թվում՝ օրինական/աշխատանքային միգրացիայի, օտարերկրացիների ինտեգրմանը եւ Հայաստանի քաղաքացիների վերաինտեգրմանն (կամավոր կամ ոչ կամավոր վերադարձող) աջակցող միջոցառումների եւ անկանոն միգրացիայի դեմ պայքարի ոլորտում (ներառյալ՝ ծագման հիմնական եւ (կամ) տարանցման երկրների հետ հետընդունման մասին համաձայնագրերի կնքմանը, ինչպես նաեւ անօրինական միգրանտների ներքին հայտնաբերմանն ուղղված շարունակական ջանքերը):**

Վերջին տարիներին Հայաստանը զգալի իրավական, ինստիտուցիոնալ եւ գործառական բարեփոխումներ է իրականացրել միգրացիայի կառավարման իր համակարգի արդիականացման համար՝ Հայաստանի կառավարության 2021-2026 թվականների ծրագրին համահունչ, որին աջակցում են նաեւ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող մի քանի նախագծեր: Այս բարեփոխումներն ուղղված են

ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը, միգրացիոն հոսքերի առավել արդյունավետ կառավարման ապահովմանը եւ ինտեգրման, ապաստանի տրամադրման եւ հետընդունման գործընթացների ամրապնդմանը: Առանցքային տարրը Ներքին գործերի նախարարության միգրացիայի եւ քաղաքացիության ծառայության ստեղծումն էր, որն սկսեց գործել 2024 թվականի փետրվարից եւ աջակցություն է ստանում Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) եւ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ՄՔՄՄԿ) կողմից իրականացվող՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող մի քանի նախագծերով:

Հայաստանում միգրացիայի ոլորտում շարունակվող բարեփոխումների մի մասն ուղղված է բնակչության եւ միգրացիայի կառավարման համակարգերի թվայնացմանը, ինչպիսիք են 2025 թվականի հուլիսի 3-ին ընդունված «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքում ներառված դրույթները, որոնք ուժի մեջ կմտնեն 2027 թվականի հունվարի 1-ից: Բացի Հայաստանի քաղաքացիների մասին տվյալներից, նոր ռեգիստրը կներառի տվյալներ Հայաստանում օրինական բնակվող բոլոր օտարերկրացիների մասին: Օրենքն իրավական հիմք է ապահովում բնակչության միասնական ռեգիստրի ստեղծման համար, որը բոլոր անձնական, ժողովրդագրական եւ քաղաքացիական ակտերի վերաբերյալ տվյալները միավորում է մեկ տեղեկատվական համակարգի մեջ:

Զուգահեռաբար Հայաստանն առաջ է մղում քաղաքացիության եւ օրինական բնակության հետ կապված վարչական ծառայությունների թվայնացման բարեփոխումները: 2025 թվականի հունվարի 22-ին ընդունվել են «Քաղաքացիության մասին» օրենքի փոփոխությունները, որոնցով ներդրվում են Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու կամ այն դադարեցնելու մասին դիմումների ներկայացման էլեկտրոնային ընթացակարգեր: 2026 թվականի հունվարի 1-ին պաշտոնապես գործարկվել է Քաղաքացիության գործերի էլեկտրոնային կառավարման համակարգը: Այն հնարավոր է դարձնում գործերի թվային կառավարումը, նվազեցնում է վարչական բեռը եւ բարձրացնում է արդյունավետությունը: Օտարերկրյա քաղաքացիների համար աշխատանքային

թույլտվությունների եւ կացության թույլտվության ընթացակարգերի թվայնացումը ներառված է նաեւ 2026 թվականի հունվարին ընդունված՝ «Օտարերկրացիների մասին» օրենքի փոփոխությունների մեջ, որոնք ուժի մեջ կմտնեն 2026 թվականի նոյեմբերին:

2023 թվականի հոկտեմբերին Կառավարության որոշմամբ Ղարաբաղի հայերին (ընդհանուր 115,000) տրամադրվել է ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ: Կառավարությունը 2025 թվականի դեկտեմբերին երկարաձգել է այդ ժամանակավոր պաշտպանությունը մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 31-ը: Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունն իրականացնում է հանրային իրազեկման արշավներ այս հարցի վերաբերյալ եւ դյուրացրել է արագացված ընթացակարգով քաղաքացիության ձեռքբերումը տեղահանված անձանց համար: 2023 թվականից մինչեւ 2026 թվականի մարտի կեսերն ընկած ժամանակահատվածում Հայաստանի քաղաքացիություն է ստացել ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ ունեցող ընդհանուր 34 567 անձ: Մինչ օրս այս ծրագրով բոլոր դիմումատուներն ստացել են Հայաստանի քաղաքացիություն:

Հայաստանը միջոցառումներ է իրականացնում վերադարձող քաղաքացիների վերաինտեգրմանն աջակցելու համար: Վերաինտեգրման աջակցությունն իրականացվում է պետական ծրագրերի, դոնորների կողմից ֆինանսավորվող նախաձեռնությունների եւ քաղաքացիական հասարակության ներգրավման միջոցով:

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից 2023 թվականին ստեղծված Հայրենադարձության եւ ինտեգրման կենտրոնը շարունակել է գործել որպես հայրենադարձության եւ վերաինտեգրման աջակցության կենտրոնական մեկնարկային կետ: Կենտրոնն ապահովում է գործերի անհատականացված կառավարում եւ աջակցություն, որն ընդգրկում է

իրավական կարգավիճակը, հանրային ծառայությունների մատչելիությունը, զբաղվածությունը, կրթությունը, ձեռնարկության հիմնադրումը եւ ավելի լայն սոցիալ-տնտեսական ինտեգրումը՝ փոխլրացված լեզվի ուսուցմամբ, ինտեգրման սեմինարներով եւ բազմալեզու ուղեցույց նյութերով:

Հայաստանը շարունակում է ամրապնդել իր համագործակցությունը հետընդունման ոլորտում Եվրոպական միության, ԵՄ անդամ պետությունների եւ ԵՄ անդամ չհանդիսացող երկրների հետ: Հայաստանը 2025 թվականի հուլիսի 21-ին ստորագրել է «Հետընդունման մասին» երկկողմ համաձայնագիր Վրաստանի հետ, որը Հայաստանի խորհրդարանի կողմից վավերացվել է 2026 թվականի հունվարի 19-ին: Մշակվում են լրացուցիչ համաձայնագրեր Ուկրաինայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Իսլանդիայի, Չեռնոգորիայի եւ Ալբանիայի հետ, իսկ Մոլդովայի հետ համաձայնագիրը պատրաստ է ստորագրման: Հայաստանն առաջարկել է հետընդունման համաձայնագրեր կնքել նաեւ Իրաքին եւ Հնդկաստանին:

ԵՄ անդամ պետությունները 2025 թվականին Հայաստանին ուղարկել են հետընդունման 775 հարցում, որոնց ի պատասխան տրամադրվել է 479 անհետաձգելի ճամփորդական փաստաթուղթ: Արդյունքում 2025 թվականին «Ֆրոնտեքս»-ի աջակցությամբ չարտերային չվերթներով վերադարձել է 119 հայ: 2022 թվականի հուլիսից Հայաստանն ընդգրկված է «Ֆրոնտեքս»-ի կողմից ղեկավարվող՝ ԵՄ վերաինտեգրման ծրագրում (ԵՄՎԾ):

Հայաստանում անկանոն միգրանտների ներքին հայտնաբերումն իրականացվում է բազմագերատեսչական մեխանիզմի միջոցով: Հայտնաբերված դեպքերը փոխանցվում են Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությանը՝ իրավական կարգավիճակը գնահատելու, կիրառելիության դեպքում միջազգային պաշտպանության ընթացակարգեր նախաձեռնելու կամ վերադարձի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար՝ ազգային օրենսդրության եւ հետընդունման համաձայնագրերի համաձայն: Թեեւ գործում է հիմնական իրավական եւ ինստիտուցիոնալ հիմք, ներքին հայտնաբերման համակարգը շարունակում է կրել

հիմնականում ռեակտիվ եւ դեպքերի վրա հիմնված բնույթ՝ ունենալով սահմանափակ վերլուծական աջակցություն, ռիսկերի վրա հիմնված թիրախավորում կամ կառուցվածքային միջգերատեսչական գործառական համակարգում: Վերադարձի եւ արտաքսման մասին որոշումների կատարման մակարդակը շարունակում է ցածր լինել:

Ինչ վերաբերում է օրինական միգրացիային, ապա Հայաստանի իշխանությունները ջանքեր են գործադրել աշխատանքի թույլտվությունների տրամադրման համակարգերը պարզեցնելու, աշխատանքի տեսչական մեխանիզմը կատարելագործելու եւ իրենց քաղաքականությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

- **Ազգային միգրացիոն ռազմավարության ընդունում, որն ապահովում է միգրացիոն քաղաքականության իրավական հայեցակետերի արդյունավետ կիրառումը, այդ թվում՝ հիմնարար իրավունքների չափանիշները (ներառյալ՝ երեխաների համար), հստակ ժամկետները, նպատակները, գործողությունները, արդյունքները, կատարողականի ցուցանիշները, ինչպես նաեւ մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ նախատեսող համապատասխան գործողությունների ծրագրի մշակում եւ հաստատում:**

Ներկայումս Հայաստանի իշխանությունները ԵՄ աջակցությամբ մշակում են միգրացիայի եւ քաղաքացիության 2026-2031 թվականների նոր ռազմավարություն, որը նախատեսվում է հանրային քննարկման ներկայացնել 2026 թվականի կեսերին:

Այս ապագա ռազմավարությամբ Հայաստանի իշխանությունները մտադիր են գործարկելու մարդկանց շարժունակության բոլոր ուղղությունների կառավարման համար ինտեգրված, ապացուցահեն եւ հեռանկարային շրջանակ, որը կնպաստի Հայաստանի ժողովրդագրական դիմակայունությանը, մարդկային

կապիտալի զարգացմանը եւ միջազգային գործընկերությանը: Ռազմավարությամբ նախատեսվում է հայտարարել հետագա փոփոխություններ միգրացիայի, ապաստանի եւ քաղաքացիության իրավական դաշտում:

5.3. Ապաստանի տրամադրման քաղաքականություն

- **Ապաստանի տրամադրման քաղաքականության իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի համախմբում եւ մոտարկում ԵՄ եւ միջազգային չափանիշներին, որը լիովին կհամապատասխանի անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքին եւ կներառի լրացուցիչ պաշտպանություն՝ կարգավիճակի որոշման, իրավունքների պաշտպանության (տեղաշարժի ազատություն, առողջապահություն, կրթություն, խտրականության բացառում, աշխատանքային եւ սոցիալական այլ իրավունքներ) հետ կապված արդար ընթացակարգերի արդյունավետ մատչելիությունն ապահովող օրենսդրության ընդունման եւ երկարաժամկետ լուծումների միջոցով, այդ թվում՝ միջազգային պաշտպանություն հայցող եւ դրանից օգտվող անձանց ինտեգրումը, ինչպես նաեւ հատուկ ուշադրություն դարձնելով խոցելի իրավիճակում գտնվող անձանց, այդ թվում՝ քաղաքացիություն չունեցող անձանց:**

Հայաստանը 1993 թվականին վավերացրել է «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիան եւ դրա 1967 թվականի արձանագրությունը:

Հայաստանի իշխանությունները նպատակ ունեն ամրապնդելու միջազգային պաշտպանության իրավական շրջանակը, իսկ «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքի փոփոխությունների ընդունումն Ազգային ժողովում նախատեսվում է 2026 թվականի երկրորդ կեսին: Նպատակը երկրի ազգային ապաստանի համակարգը ԵՄ եւ միջազգային չափանիշներին էլ ավելի համապատասխանեցնելն է՝ սահմանելով միջազգային պաշտպանության հստակ սահմանված ձեւեր եւ ապահովելով արդյունավետ մատչելիություն ապաստանի արդար եւ արդյունավետ ընթացակարգերին: Օրենքի նախագիծը նաեւ նպատակ ունի երաշխավորելու իրավաբանական օգնության մատչելիությունը, ապահովելու արդար եւ թափանցիկ ընթացակարգեր՝ հիմնված հիմնավորված որոշումների

վրա, ամրապնդելու անձնական տվյալների մշակման երաշխիքները եւ բարելավելու սահմանին ապաստան հայցողների համար նախատեսված ընթացակարգային երաշխիքները: Հատուկ երաշխիքներ են նախատեսված խոցելի անձանց, այդ թվում՝ երեխաների, ինչպես նաեւ հանձնման կամ քրեական հետապնդման ենթակա օտարերկրյա քաղաքացիների համար:

Հայաստանը մշակում է նաեւ «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» նոր օրենքի նախագիծ: Վերջին տարիներին այս ոլորտում տեղի ունեցած կազմակերպական զարգացումները ներառում են սահմանային ուղղորդման ամրապնդված մեխանիզմները, ապաստանի գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի ստեղծման նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաեւ միգրացիայի, սահմանների կառավարման, դատական իշխանության եւ սոցիալական պաշտպանությամբ զբաղվող հաստատությունների միջեւ ընդլայնված համագործակցությունը:

Ներկայումս ընթանում է Երեւանի մերձակայքում ապաստան հայցողների համար նախատեսված նոր ժամանակավոր կացարանի կառուցման վերջնական փուլը: Ակնկալվում է, որ առաջին ապաստան հայցողները նոր տարածք կտեղափոխվեն 2026 թվականի ընթացքում: Նոր կենտրոնը նախատեսված է մինչեւ 100 անձի համար:

Վերոնշյալ եզրահանգումների հիման վրա առաջարկվում է, որ **սահմանների համալիր կառավարման, միգրացիայի կառավարման եւ ապաստանի** (առաջին փուլ) վերաբերյալ 2-րդ հիմնական ուղղության հենանիշերի առնչությամբ Հայաստանի իշխանությունները՝

<u>Սահմանների համալիր կառավարում</u>

- *շարունակեն անցումային գործընթացը՝ ապահովելու համար, որ Հայաստանում սահմանների հսկողությունն ամբողջությամբ գտնվի Հայաստանի իշխանությունների պատասխանատվության ներքո,*

- *«Ֆրոնտեքս»-ի հետ կնքեն նոր աշխատանքային համաձայնագիրը եւ իրականացնեն այն,*

- *մշակեն ՍՀԿ հետագա ռազմավարություն եւ դրան կից միջոցառումների ծրագիր՝ ԵՄ չափանիշներին համահունչ, ինչպես նաեւ հստակ սահմանված պատասխանատվություններով, իրատեսական ժամկետներով եւ մշտադիտարկման գործուն մեխանիզմներով,*

- *վերանայեն «Սահմանապահ զորքերի կարողությունների զարգացում սահմանների համալիր կառավարման համակարգի շրջանակներում» վերտառությամբ 2026-2029 թվականների միջոցառումների ծրագրի նախագիծը՝ ներառելով ռեսուրսների, հաշվետվողականության մեխանիզմների, չափելի թիրախների եւ կատարողականի ցուցանիշների վերաբերյալ համապատասխան դրույթներ,*

- *բարեփոխեն եւ արդիականացնեն սահմանային մարմինների, այդ թվում՝ մաքսային ծառայության եւ ոստիկանության ուժերի ուսուցման համակարգը՝ սահմանային հսկողության եւ սահմանային ստուգումների ոլորտում (ինչպես նաեւ կոռուպցիայի կանխարգելման, մաքսանենգության եւ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտներում) հետեւողականորեն բարձր մասնագիտական չափանիշներ ապահովելու նպատակով՝ պետական սահմանային ուժերի աճող պարտականություններին եւ ՍՀԿ-ի ԵՄ մոդելի պահանջներին համահունչ,*

- *ընդունեն միջգերատեսչական արդյունավետ համագործակցության եւ երկրի սահմանային, մաքսային ու ոստիկանության մարմինների միջեւ տեղեկությունների համակարգված փոխանակման հատուկ իրավական շրջանակ՝ ՍՀԿ մոդելի կայուն իրականացումն ապահովելու նպատակով,*

- *իրականացնեն բարեվարքության ռիսկերի կանոնավոր գնահատումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով սահմաններին առնչվող*

խոցելիություններին (ինչպես օրինակ՝ փաստաթղթերի կեղծում, մաքսանենգության խթանում եւ ստուգման ընթացակարգերում կոռուպցիա) եւ հետագայում մշակեն թիրախային կանխարգելիչ եւ մեղմացման միջոցառումներ՝ վերհանված ռիսկերը հասցեագրելու նպատակով,

- *սահմանապահների համար ներդնեն կոռուպցիայի դեմ պայքարի պարտադիր եւ պարբերական ուսուցման դասընթացներ՝ փոխլրացված գործառույթներին հատուկ մոդուլներով, որոնք նախատեսված են բարձր ռիսկային պարտականություններ ունեցող, այդ թվում՝ փաստաթղթերի ստուգման, սահմանային ստուգումների, մաքսային ստուգումների, ապաստանի դիմումների նախնական ուսումնասիրության եւ հետախուզական գործառույթներ ունեցող անձնակազմի դիմակայունությունը բարձրացնելու համար,*

- *կոդիֆիկացնեն ԱԱԾ-ի քննչական արձանագրությունները կա՛մ համապատասխան վարքագծի կանոնագրքում, կա՛մ հարակից ենթաօրենսդրական ակտերում՝ սահմանելով հստակ ընթացակարգեր, ժամկետներ, ապացուցահեն չափանիշներ եւ համարժեք պատժամիջոցներ՝ հակաօրինական վարքագծի եւ բարեվարքության խախտումների նկատմամբ կանխատեսելի, արդար եւ ժամանակին արձագանք ապահովելու նպատակով:*

<u>Միգրացիայի կառավարում</u>

- *շարունակեն համապատասխան իրավական շրջանակի մշակմանն ուղղված ջանքերը՝ ինչպես անօրինական, այնպես էլ օրինական միգրացիայի հետ կապված մարտահրավերները հասցեագրելու նպատակով,*

- *ընդունեն միգրացիոն նոր ռազմավարություն՝ ապահովելով համապարփակ եւ համահունչ քաղաքականության շրջանակ, որը համապատասխանում է ընթացիկ եւ կանխատեսվող միգրացիոն հոսքերին,*

ինչպես նաեւ միջազգային չափանիշներին, եւ որն աջակցվում է պետական բյուջեից կատարվող բավարար եւ կայուն հատկացումներով,

- *հետամուտ լինեն բնակչության եւ միգրացիայի կառավարման գործընթացների թվայնացմանը՝ միեւնույն ժամանակ ապահովելով անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ ազգային օրենսդրության պահանջների լիակատար պահպանումը, որն այժմ ենթարկվում է զգալի մշակման, եւ ԲՊՈ-ի հետ փոխգործակցելիություն,*

- *շարունակեն արդյունավետ, կանխատեսելի եւ կայուն վերադարձի ու հետընդունման մեխանիզմների ամրապնդման նպատակով կնքել հետընդունման մասին համաձայնագրեր այն հիմնական երկրների հետ, որոնք ներկայիս միգրացիոն հոսքերի աղբյուրն են:*

<u>Ապաստան</u>

- *լիարժեք գործողության մեջ դնեն ապաստան հայցողների համար նախատեսված նոր ժամանակավոր կենտրոնը եւ համապատասխան դիմողներին տեղափոխեն այնտեղ,*

- *ընդունեն «Փախստականների եւ ապաստանի մասին» օրենքի փոփոխությունները եւ «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» նոր օրենք՝ ԵՄ եւ միջազգային չափանիշներին ապաստանի ազգային համակարգի հետագա համապատասխանեցման նպատակով:*

6. Հիմնական ուղղություն 3. Հասարակական կարգ եւ անվտանգություն

6.1. Կազմակերպված հանցավորության, ահաբեկչության եւ կոռուպցիայի կանխարգելում եւ դրանց դեմ պայքար

- **Կազմակերպված հանցավորության կանխարգելման եւ դրա դեմ պայքարի իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում՝**

ԵՄ եւ միջազգային չափանիշներին համապատասխան, ազգային ռազմավարության եւ միջոցառումների ծրագրի հետ միասին, որը կպարունակի հստակ ժամկետներում կոնկրետ նպատակներ, գործողություններ, արդյունքներ, կատարողականի ցուցանիշներ եւ բավարար մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ:

Հայաստանը Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի (Պալերմոյի կոնվենցիա) եւ Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (Մերիդայի կոնվենցիա) կողմ է: Կազմակերպված հանցավորության տարբեր ձեւերի իրավական սահմանումն ու քրեականացումը սահմանված են Հայաստանի քրեական օրենսգրքի 34-րդ գլխում, որով պատասխանատվություն է սահմանվում հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործությունների համար:

2022 թվականի հուլիսին ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքով Հայաստանում առաջին անգամ ներդրվեց իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության համակարգը: Այս շրջանակը սահմանում է քրեական պատասխանատվություն սահմանելու հիմքերն ու պայմանները, ինչպես նաեւ այն հանգամանքները, որոնց դեպքում իրավաբանական անձինք կարող են ազատվել այդ պատասխանատվությունից: Այն նախատեսում է նաեւ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառելի մի շարք քրեաիրավական միջոցներ (այդ թվում՝ ֆինանսական տույժերը, կոնկրետ գործունեության ժամանակավոր կասեցումը, Հայաստանի տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը եւ հարկադիր լուծարումը): Այնուամենայնիվ, իրավաբանական անձանց դատապարտման դեպքեր դեռեւս չեն գրանցվել:

Քրեական դատավարության նոր օրենսգրքով ներդրվել են նաեւ բազմաթիվ կարեւոր կառուցվածքային եւ ընթացակարգային փոփոխություններ, որոնք ուղղակի ազդեցություն ունեն Հայաստանում ծանր եւ կազմակերպված հանցավորության վերաբերյալ գործերի քննության եւ քրեական հետապնդման

վրա: Մասնավորապես վերացվել է քրեական գործ հարուցելու պաշտոնական նախնական փուլը, եւ քրեական գործերով քննություններն այժմ սկսվում են հնարավոր հանցանքի վերաբերյալ նշաններ պարունակող առաջին ընթացակարգային փաստաթղթի գրանցմամբ:

Բացի այդ, օպերատիվ-հետախուզական գործողությունները ներառվել են Քրեական դատավարության օրենսգրքում: Սա նշանակում է, որ Քննչական կոմիտեի կամ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները հենց սկզբից ներգրավված են բոլոր քրեական վարույթներում: Այս շրջանակում օպերատիվ-հետախուզական լիազորությունները վերապահվել են բացառապես Հակակոռուպցիոն կոմիտեին, իսկ Քննչական կոմիտեն, որը պատասխանատու է կոռուպցիոն հանցագործություններից բացի բոլոր հանցագործությունների քննության համար, գործում է առանց օպերատիվ լիազորությունների՝ հիմնականում հենվելով Ներքին գործերի նախարարության ոստիկանության լիազորությունների վրա:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից իրականացվող ԵՄ նախագծի հիման վրա Հայաստանի իշխանությունները 2026 թվականի փետրվարին Ներքին գործերի նախարարության կազմում ստեղծել են հանցավորության վիճակագրության եւ հետազոտական առանձին կենտրոն: Այս կենտրոնը նախատեսված է Նախարարության շրջանակում որոշումների կայացման համար վերլուծական աջակցություն տրամադրելու եւ հանցավորության միտումների եւ զարգացումների վերաբերյալ իշխանություններին առավել համապարփակ ամփոփ նկարագիր ներկայացնելու նպատակով:

Հայաստանը մշակում է նաեւ Հանցավորության կանխարգելման 2026-2033 թվականների ռազմավարություն, որի ընդունումը նախատեսվում է 2026 թվականի երկրորդ կեսին: Այդ ռազմավարության նախագիծը ցույց է տալիս Հայաստանի մտադրությունը՝ ամրապնդելու հանցավորության կանխարգելման իր կարողություններն ապացուցահեն քաղաքականության մշակման, ինստիտուցիոնալ համակարգման եւ թիրախային կանխարգելիչ

միջոցառումների միջոցով: Հայաստանը նախատեսում է ամրապնդել հանցավորության կանխարգելման ոլորտում իր գործառական կարողությունները ոստիկանության համար թիրախային հմտությունների զարգացման, հանցավորության կանխարգելման նորարարական տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաեւ կիբեռհանցավորության կանխարգելման, ընտանեկան եւ ընտանիքում բռնության դեմ պայքարի, երիտասարդների շրջանում հանցավորության կանխարգելման եւ զոհերի նույնացման ոլորտներում ավելի լայն կարողությունների միջոցով: Ռազմավարության նախագիծը նաեւ ընդգծում է հանցավորության կանխարգելման բնագավառում տեղական եւ միջազգային համագործակցության ամրապնդման կարեւորությունը: Ռազմավարության նախագծի մշակման նպատակով Հայաստանը մեծապես օգուտ է քաղել Եվրոպոլի ղեկավարությամբ եւ «TOPCOP» նախագծի շրջանակում ձեռք բերված ռազմավարական հետախուզական վերլուծության մեթոդաբանություններից:

- **Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում եւ դրա համապատասխանեցում ԵՄ եւ միջազգային չափանիշներին, այդ թվում՝ համապատասխան միջոցառումների ծրագրի մշակում ու հաստատում, որով նախատեսվում են հստակ ժամկետներ, նպատակներ, գործողություններ, արդյունքներ, կատարողականի ցուցանիշներ, մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ**:

Հայաստանը վավերացրել է «Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, արգելման եւ պատժի մասին» արձանագրությունը, ինչպես նաեւ «Ցամաքով, ծովով եւ օդով միգրանտների մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեմ» արձանագրությունը, որոնք երկուսն էլ լրացնում են Պալերմոյի կոնվենցիան: Հայաստանը մասնակցում է Հանձնաժողովի կողմից նախաձեռնված՝ Միգրանտների մաքսանենգության դեմ պայքարի գլոբալ դաշինքին եւ հաստատել է Հանձնաժողովի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 10-ին Բրյուսելում կազմակերպված միջազգային համաժողովում ընդունված համատեղ հռչակագիրը:

Նոր Քրեական օրենսգրքով եւ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում են մարդկանց թրաֆիքինգին վերաբերող դրույթներ: Մասնավորապես Քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսվում է մարդկանց թրաֆիքինգի եւ շահագործման թարմացված սահմանում, իսկ 189-րդ հոդվածով նախատեսվում է անչափահասների կամ խոցելի իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ կատարված՝ թրաֆիքինգի հետ կապված ծանրացնող հանգամանքներով հանցագործությունների վերաբերյալ դրույթներ:

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանը ձեռնարկել է մի շարք օրենսդրական եւ ինստիտուցիոնալ միջոցառումներ՝ մարդկանց թրաֆիքինգի եւ շահագործման հարակից ձեւերի կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի իր շրջանակն ամրապնդելու համար՝ միջազգային չափանիշներին համապատասխան: «Մարդկանց թրաֆիքինգի եւ շահագործման ենթարկված անձանց նույնացման եւ աջակցության մասին» օրենքի փոփոխություններն ընդունվել են 2014 թվականի դեկտեմբերին եւ 2022 թվականի մայիսին եւ սահմանում են զոհերի նույնացման եւ աջակցության մեխանիզմների համապարփակ հիմք: 2022 թվականի հոկտեմբերին Կառավարության որոշմամբ հաստատվել են անձին թրաֆիքինգի կամ շահագործման զոհ ճանաչելու չափանիշները: Այնուհետեւ սահմանվել են համապատասխան հաստատությունների կողմից տրամադրվող կացարանի, կենսապահովման աջակցության, հոգեբանական աջակցության, խորհրդատվության, իրավաբանական օգնության եւ խնամքի ծառայությունների մատուցման նվազագույն որակական չափանիշները:

Ռազմավարական մակարդակով Հայաստանը 2023 թվականի հունվարին հաստատել է 2023-2025 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը՝ դրանից բխող միջոցառումների ծրագրի հետ միասին: Ըստ Հայաստանի իշխանությունների՝ ներկայումս ընթանում են հաջորդ եռամյա ազգային գործողությունների ծրագրի նախապատրաստական աշխատանքները, որի ընդունումը նախատեսվում է 2026 թվականի ապրիլին:

- Կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում եւ համապատասխանեցում ԵՄ եւ միջազգային չափանիշներին, ինչպես նաեւ կոռուպցիայի դեմ պայքարի ազգային ռազմավարության ընդունում, նշված ռազմավարության կիրարկմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակում եւ հաստատում, որով նախատեսվում են հստակ ժամկետներ, նպատակներ, գործողություններ, արդյունքներ, կատարողականի ցուցանիշներ, մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ, կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների, այդ թվում՝ Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի եւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ջանքերի համակարգում՝ նպատակ ունենալով մասնավորապես ապահովել կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու մարմինների անկախությունը, արդյունավետությունը, հզորացումը եւ հաշվետվողականությունը եւ ամրապնդել նրանց միջեւ տեղեկությունների փոխանակման մեխանիզմները, ամուր օրենսդրական եւ կարգավորվող ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծում, այդ թվում՝ կոռուպցիայի (ներառյալ՝ բարձր մակարդակներում կոռուպցիան, միջազգային գործարքներում կոռուպցիան եւ կոռուպցիայի դեպքերի մասին հաղորդող ազդարարների պաշտպանությունը), կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանն ու ճնշմանը եւ պետական հաստատություններում/մարմիններում բարեվարքության չափանիշների սահմանմանն ուղղված ներքին հսկողության մեխանիզմների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերի ընդունում, օրենսդրական շրջանակի ամրապնդում, ի թիվս այլնի, ԳՐԵԿՈ-ի (Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ) եւ ՏՀԶԿ-ի (Կոռուպցիայի դեմ պայքարի ցանց. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր) առաջարկությունների կատարման համար:

2018 թվականին նախաձեռնված բարեփոխումներից ի վեր Հայաստանը

զգալիորեն ամրապնդել եւ ներդաշնակեցրել է իր հակակոռուպցիոն իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Երկիրը կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի հիմնական միջազգային իրավական փաստաթղթերի եւ մշտադիտարկման մեխանիզմների կողմ է եւ ակտիվորեն մասնակցում է ՏՀԶԿ-ի Արեւելյան Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցին եւ ՏՀԶԿ-ի Հանրային բարեվարքության ցուցիչների նախաձեռնությանը:

Հայաստանն իր օրենսդրական եւ ինստիտուցիոնալ բարեփոխումները համախմբել է՝ ի պատասխան ԳՐԵԿՈ-ի գնահատման հաջորդական փուլերի արդյունքում ներկայացված առաջարկությունների: 2022 թվականի հուլիսից ուժի մեջ մտած նոր Քրեական օրենսգրքով ընդլայնվել է կոռուպցիոն հանցանքների շրջանակը, ներդրվել է քրեական պատասխանատվություն իրավաբանական անձանց համար, եւ առավել հստակեցվել է կոռուպցիոն հանցանքների հանցակազմը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Զուգահեռաբար կանխարգելիչ եւ քննչական լիազորություններ են վերապահվել հատուկ մասնագիտացված մարմիններին, մասնավորապես՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, Հակակոռուպցիոն կոմիտեին եւ Գլխավոր դատախազության կազմում գործող երկու մասնագիտացված ստորաբաժանումներին:

Հայաստանի հինգերորդ ազգային հակակոռուպցիոն ռազմավարությունն (2023-2026 թվականներ) արտացոլում է միջազգային գործընկերների եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից բարձրացված մտահոգություններն ու առաջարկությունները, ինչպես նաեւ ազգային հակակոռուպցիոն կառույցների կողմից տրամադրված տվյալները: Ռազմավարությունը կենտրոնացած է հակակոռուպցիոն շրջանակի առավել ամրապնդման եւ օրենսդրության արդյունավետ կիրարկման վրա: Նախատեսվում է 2026 թվականի կեսերին ընդունել նոր հակակոռուպցիոն ռազմավարություն՝ որպես արդարադատության ոլորտի համապարփակ ռազմավարության

հիմնասյուներից մեկը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը պատասխանատու է հանրային ոլորտում կոռուպցիայի կանխարգելման եւ բարեվարքության ապահովման համար: Հայաստանում 2021-2025 թվականների ընթացքում ակտիվների հայտարարագրման համակարգը զգալիորեն ընդլայնվել է: Այդ ընդլայնման արդյունքում հանրային պաշտոնատար անձանց սահմանված կատեգորիաներից այժմ պահանջվում է ներկայացնել իրենց գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի մանրամասն հայտարարագրեր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը գործարկում է հայտարարագրման էլեկտրոնային համակարգ եւ օրենքով լիազորված է մատչել պետական տվյալների շտեմարաններին եւ ֆինանսական գրառումներին, այդ թվում՝ այն տվյալներին, որոնք սովորաբար պաշտպանվում են բանկային գաղտնիքի, արժեթղթերով գործարքների գաղտնիության, ապահովագրական գաղտնիքի եւ վարկային տեղեկատվության գաղտնիության պահանջներով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացնում է բարեվարքության ստուգումներ եւ տրամադրում է խորհրդատվական կարծիքներ դատական, դատախազական եւ այլ բարձր հասարակական պաշտոններում, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեում եւ Քննչական կոմիտեում պաշտոնի նշանակման կամ առաջխաղացման թեկնածուների վերաբերյալ: 2024 թվականի ապրիլի 11-ին ընդունված՝ Դատական օրենսգրքի փոփոխություններով ներդրվել են դատավորների, դատախազների եւ քննիչների բարեվարքության շարունակական ստուգումներ, եւ 2024-2025 թվականներին բազմաթիվ գործող դատախազներ եւ քննիչներ անցել են այդ գնահատումները: Հանձնաժողովի կարծիքները խորհրդատվական բնույթ ունեն եւ որոշ դեպքերում նշանակող մարմինները դրանք անտեսել են: 2026 թվականի մարտի 4-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է թափանցիկության բարձրացման եւ բարեվարքության վերաբերյալ կարծիքների տրամադրման գործընթացի ձեւակերպման նպատակով մշակված նոր օրենսդրական փաթեթը:

Ազգային ժողովը 2026 թվականի հունվարին ընդունել է «Կոռուպցիայի

կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի փոփոխությունները՝ պետական մարմիններում ներդնելով կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգ: Օրենքն ուժի մեջ կմտնի դրա ընդունումից վեց ամիս հետո՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից Կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության հաստատումից հետո:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ոլորտային վարքագծի կանոնագրքերի մշակման գործընթացում տրամադրում է նաեւ մեթոդաբանական աջակցություն պետական մարմիններին եւ լիազորված է կարծիքներ տրամադրել իր կողմից հայտնաբերված ցանկացած թերության վերաբերյալ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ներկայումս չունի բավարար թվով անձնակազմ եւ բավարար օրենսդրական եւ ֆինանսական միջոցներ իր լայն լիազորություններն արդյունավետ իրականացնելու համար:

Սկսվել են «Կոռուպցիայի կանխարգելման մասին» նոր օրենքի նախապատրաստական աշխատանքները, որի նպատակն է համախմբել շահերի բախման, նվերների ընդունման, վարքագծի կանոնագրքի, անհամատեղելիությունների եւ դրանց հետ կապված բարեվարքության չափանիշների վերաբերյալ գործող կարգավորող շրջանակը:

Ներքին գործերի նախարարությունում բարեվարքության հետ կապված կարգավորումների շրջանակում նորաստեղծ Ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչությանը վերապահվել է լիազորությունների լայն շրջանակ, այդ թվում՝ կարգապահական վարույթների իրականացում, կոռուպցիայի կանխարգելում եւ հայտնաբերում, ստուգումների եւ օպերատիվ գործունեության իրականացում, ինչպես նաեւ Նախարարության անձնակազմի բարեվարքության ստուգումների անցկացում: Բարեվարքության շրջանակը հետագայում ամրապնդվել է 2025 թվականի հոկտեմբերին՝ «Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի ընդունմամբ եւ դրան հաջորդած ենթաօրենսդրական ակտերով, որոնք միասին սահմանում են ոստիկանության աշխատակիցների եւ հրշեջ-փրկարարական ծառայության

անձնակազմի նկատմամբ կարգապահական քննությունների եւ բարեվարքության գնահատումների չափանիշները, պարտականություններն ու ընթացակարգերը: «Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» օրենքի համաձայն՝ ոստիկանության աշխատակցի պաշտոնի թեկնածուները նախքան պաշտոնում առաջին անգամ նշանակվելն անցնում են բարեվարքության ստուգում: Բարեվարքության այս ստուգումներն սկսել են իրականացվել 2026 թվականի հունվարից:

Հայաստանի Հակակոռուպցիոն կոմիտեն կոռուպցիոն հանցանքների քննության եւ կոռուպցիոն գործերով մինչդատական քրեական վարույթների իրականացման համար պատասխանատու մարմինն է: Կոմիտեն, ստեղծված լինելով հատուկ օրենքով, ունի ինստիտուցիոնալ բարձր անկախություն եւ լիազորված է իրականացնելու օպերատիվ-հետախուզական գործողություններ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակվում է Կառավարության կողմից՝ վեց տարի ժամկետով, մեկ անգամ երկարաձգելու հնարավորությամբ:

Հակակոռուպցիոն կոմիտեն օրենքով պարտավոր է հանրությանը տեղեկացնել իր գործունեության մասին՝ պահպանելով մինչդատական քննությունների գաղտնիությունը եւ պետական գաղտնիքի պաշտպանությունը: Թեեւ կոռուպցիոն գործով դատապարտումների թիվն աճում է, պատժի կիրառման պրակտիկան վկայում է պայմանական պատժի լայն կիրառման մասին, ինչը վտանգում է նվազեցնել քրեական պատժամիջոցների կանխարգելիչ ազդեցությունը եւ թուլացնել հանրության վստահությունն արդարադատության համակարգի նկատմամբ: Օրինակ՝ 2024 թվականին ազատությունից զրկելու հետ կապված պատիժներ նշանակվել են ընդամենը 37 անձի նկատմամբ, մինչդեռ 185 անձի նկատմամբ պայմանական պատիժ է կիրառվել:

Ներկայումս Հակակոռուպցիոն կոմիտեն չունի բարձր ռիսկային ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարի համապարփակ ռազմավարական մոտեցում, որը համապատասխանեցված է եվրոպական չափանիշներին եւ լավ գործելակերպերին: Ռազմավարական եւ ռիսկերի վրա հիմնված շրջանակի

բացակայությունը սահմանափակում է Կոմիտեի պրոակտիվ, հետախուզական տվյալների վրա հիմնված քննություններ իրականացնելու կարողությունը, մասնավորապես՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ գործերում:

Թեեւ Հայաստանը կաշառք տալու գործերով սովորաբար առգրավում է կաշառքի գումարները, կոռուպցիայից ստացված եկամուտների համակարգված հետագծումը եւ վերականգնումը շարունակում են սահմանափակ մնալ: Գլխավոր դատախազության կազմում գործող Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունը կենտրոնանում է բռնագանձման վարույթների միջոցով ակտիվների վերականգնման վրա, սակայն դրա լիազորությունը չի տարածվում քրեական վարույթների միջոցով ակտիվների վերականգնման վրա: Ներկայումս քրեական վարույթների շրջանակում ակտիվների բացահայտման եւ հետագծման համար նախատեսված կենտրոնացված եւ մասնագիտացված ստորաբաժանում առկա չէ, եւ քննիչներն ու դատախազները հակված են քրեական գործերում առավել առաջնահերթություն տալ ապացուցողական կողմին, քան ակտիվների վերականգնմանը:

- **Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում՝ այն համապատասխանեցնելով Ֆինանսական գործողությունների հանձնախմբի (ՖԱԹՖ) կողմից սահմանված ԵՄ եւ միջազգային չափանիշներին:**

Հայաստանը փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում առանցքային միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպության «Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (Վիեննայի կոնվենցիա), Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայի (Պալերմոյի կոնվենցիա), Միավորված ազգերի կազմակերպության Կոռուպցիայի

դեմ կոնվենցիայի (Մերիդայի կոնվենցիա) եւ «Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիայի կողմ է: Բացի այդ, Հայաստանը վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» 2005 թվականի կոնվենցիան (Վարշավայի կոնվենցիան): Հայաստանը նաեւ մասնակցում է Քեմդենի ակտիվների վերականգնման միջգերատեսչական ցանցին:

Հայաստանը Եվրոպայի խորհրդի փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների կոմիտեի (ՄԱՆԻՎԱԼ) անդամ է: Հայաստանի վերաբերյալ ՄԱՆԻՎԱԼ-ի վերջին փոխադարձ գնահատման զեկույցն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերին, որին հաջորդել է 2018 թվականի հուլիսի լրացուցիչ զեկույցը: Այդ զեկույցով այդ ժամանակ գնահատվել էր, որ Հայաստանը կատարել կամ մասամբ կատարել էր տեխնիկական համապատասխանության եւ արդյունավետության պահանջների մեծ մասը: ՄԱՆԻՎԱԼ-ի առաջիկա գնահատումը, որը նախատեսվում է հրապարակել 2026 թվականին՝ 2025 թվականին Հայաստան կատարած աշխատանքային այցից հետո, կարեւոր կողմնորոշիչ կլինի այս ուղենիշի հաջորդ գնահատման համար:

«Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի օրենքը գործում է 2008 թվականից եւ ենթարկվել է մի շարք փոփոխությունների, որոնցից ամենավերջինը կատարվել է 2022 թվականի հունիսին՝ միջազգային զարգացող չափանիշներին համապատասխանեցվելու նպատակով: Հայաստանը լրամշակել է «Կրիպտոակտիվների մասին» օրենքը՝ 2027 թվականի հունվարի 1-ից կրիպտոարժույթների ոլորտում կանխիկ գործարքներն արգելելու նպատակով:

- **ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համապատասխան ազգային ռազմավարության կանոնավոր թարմացում:**

Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման եւ զանգվածային ոչնչացման զենքերի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի Հայաստանի ազգային ռազմավարությունն ի սկզբանե ընդունվել է 2014 թվականին եւ ենթակա է պարբերական վերանայման ու թարմացման յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ:

2025-2028 թվականների գործող ազգային ռազմավարության հիմքում դրված է ռիսկերի վրա հիմնված մոտեցումը, եւ դրանով նախատեսվում է վերացնել այն հիմնական ռիսկերը, խոցելիությունները եւ համակարգային թերությունները, որոնք բացահայտվել էին 2021-2023 թվականների փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման ազգային գնահատման շրջանակում:

- **Համապատասխան լիազորություններ եւ ռեսուրսներ ունեցող՝ ֆինանսական հետախուզության անկախ ստորաբաժանման ստեղծում:**

Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ) ստեղծվել է 2005 թվականին՝ որպես Հայաստանի Կենտրոնական բանկի կազմում գործող առանձին ստորաբաժանում: Այն գործում է որպես վարչական տիպի ֆինանսական հետախուզության ստորաբաժանում եւ հանդես է գալիս որպես միջնորդ հաշվետու անձանց եւ իրավապահ մարմինների միջեւ: ՖԴԿ-ի լիազորությունը փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարն է՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործունեությանը վերաբերող տեղեկություններ ստանալու, վերլուծելու եւ փոխանցելու միջոցով: Կենտրոնում ներկայումս աշխատում է անձնակազմի 37 անդամ, եւ նախատեսվում է 2026 թվականին աշխատանքի ընդունել անձնակազմի եւս երեք անդամ:

Ներպետական մակարդակում ՖԴԿ-ն Հայաստանի իրավապահ համայնքի այն քիչ թվով մարմիններից է, որը Հայաստանում գործող գործընկեր մարմինների հետ համագործակցությունը պաշտոնապես ձեւակերպել է

փոխըմբռնման հուշագրերի միջոցով:

Թեեւ ՖԴԿ-ի կողմից ստացված՝ կասկածելի գործարքների վերաբերյալ հաղորդումների թիվը (2024 թվականին՝ 366) եւ Կենտրոնի կողմից իրավապահ մարմիններին փոխանցված ծանուցումների թիվը (2024 թվականին՝ 95) մնում են ցածր, միջազգային գնահատումները հետեւողականորեն ընդունել են ՖԴԿ-ի ներքին գործընթացների եւ վերլուծական աշխատանքի որակը:

- **Ակտիվների վերականգնման իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակի ամրապնդում եւ դրա համապատասխանեցում ԵՄ եւ միջազգային չափանիշներին, այդ թվում՝ ակտիվների վերականգնման գրասենյակի ստեղծում:**

2022 թվականի Քրեական օրենսգրքով սահմանվում է ապօրինի գույքի բռնագրավման իրավական շրջանակը՝ որպես քրեաիրավական միջոց: Քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածով կարգավորվում է հանցավոր ծագում ունեցող եկամտի եւ հանցագործության գործիքի բռնագրավումը: 2022 թվականին ընդունված Քրեական օրենսգրքով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ներդրումը զգալիորեն ընդլայնել է բռնագրավման կիրառման շրջանակը, որն այժմ կարող է կիրառվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց նկատմամբ:

Մեղադրական դատավճռով բռնագանձմանը զուգահեռ Հայաստանը ներդրել է առանց մեղադրական դատավճռի բռնագանձման իրավական շրջանակ: 2020 թվականի ապրիլի 16-ին Ազգային ժողովն ընդունել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը, որով սահմանվում է առանց դատավճռի բռնագանձման իրավական հիմքը: Ուստի Հայաստանն ունի օրենսդրական շրջանակ, որը մեծամասամբ համապատասխանում է այն միջազգային համաձայնագրերով սահմանված պարտավորություններին, որոնց կողմ է հանդիսանում, սակայն այդ շրջանակը դեռեւս չի համապատասխանեցված ԵՄ չափանիշներին:

Հայաստանի իշխանությունները պարտավորվել են բարեփոխեն ակտիվների

վերականգնման ազգային համակարգը եւ այն համապատասխանեցնեն ԵՄ չափանիշներին

- **Օրենսդրական շրջանակի ընդունում ի թիվս այլնի փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին հաղորդող ազդարարների պաշտպանության համար:**

Հայաստանի իրավական դաշտը 2018 թվականից ազդարարների պաշտպանության համար պաշտոնական երաշխիքներ է նախատեսում, իսկ 2022 թվականին օրենսդրությունում կատարվել են զգալի փոփոխություններ: Գործող օրենսդրությունը հնարավորություն է տալիս հաղորդել կոռուպցիոն հանցանքների, շահերի բախման, վարքագծի կանոնագրքի, անհամատեղելիության պահանջների եւ հայտարարագրերի հետ կապված խախտումների կամ հանրային շահին հասցված այլ վնասների մասին:

Թեեւ Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը պաշտոնապես լիազորված եւ օժտված է ազդարարներից եւ փոխկապակցված անձանցից նրանց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ բողոքներ եւ դիմումներ ստանալու, մինչ օրս ազդարարների պաշտպանության վերաբերյալ գործնական դեպքեր չեն արձանագրվել:

Արդարադատության նախարարությունը մշակել է օրենսդրական փոփոխություններ՝ ազդարարների պաշտպանության համակարգն ամրապնդելու նպատակով: Մասնավորապես փոփոխությունների նախագծով նախատեսվում է հստակ ընդլայնել կարգավորման շրջանակը՝ ներառելով փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված հնարավոր խախտումները, ինչպես նաեւ այն օրենքի գործողության դաշտում կներառի 250 կամ ավելի աշխատակից ունեցող մասնավոր կազմակերպությունները:

- **Թմրամիջոցների մասով քաղաքականության վերաբերյալ ազգային ռազմավարության ընդունում՝ հավասարակշռված եւ համապարփակ մոտեցմամբ, այդ թվում՝ թմրանյութերի ապօրինի շրջանառության**

դեմ պայքարի, ինչպես նաեւ թմրանյութերի պահանջարկի եւ դրանց հետ կապված վնասների վերացմանն ուղղված միջոցառումները՝ ԵՄ եւ միջազգային ստանդարտներին համապատասխան, ինչպես նաեւ միջոցառումների ծրագրի մշակում եւ հաստատում, որով նախատեսվում են հստակ ժամկետներ, նպատակներ, գործողություններ, արդյունքներ, կատարողականի ցուցանիշներ, մարդկային եւ ֆինանսական ռեսուրսներ՝ նախատեսված ազգային ռազմավարության իրականացումն ապահովելու համար:

Հայաստանը Միավորված ազգերի կազմակերպության «Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (Վիեննայի կոնվենցիա) եւ Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (Պալերմոյի կոնվենցիա) կողմ է:

Թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները Հայաստանում անվտանգության եւ հանրային առողջության համար լուրջ սպառնալիքներից են: Վերջին տարիներին Հայաստանում ընդլայնվել է թմրամիջոցների առցանց ապօրինի շրջանառությունը՝ 2021 թվականին արձանագրված 8 դեպքից 2024 թվականին հասնելով 321 դեպքի: Ընդհանուր առմամբ թմրամիջոցներին վերաբերող քրեական գործերով քննությունների թիվը նույնպես աճել է՝ արտացոլելով ինչպես իրավապահ մարմինների ուժեղացված ջանքերը, այնպես էլ Հայաստանի՝ որպես թմրամիջոցների տարանցիկ ուղու աճող դերը: 2025 թվականի դեկտեմբերի դրությամբ ոստիկանությունը քննել է թմրամիջոցների վերաբերյալ 3,311 քրեական գործ՝ 2024 թվականի 3 639 2023 թվականի 5 070, 2022 թվականի 2 266 եւ 2021 թվականի 1 544 գործերի համեմատ:

Ի պատասխան աճող սպառնալիքի՝ Հայաստանի իշխանությունները 2025 թվականի հունիսին ընդունել են Թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ոչ բժշկական նպատակներով գործածման եւ ապօրինի շրջանառության դեմ պայքարի ռազմավարությունը (2025-2027 թվականների):

Ռազմավարությամբ եւ դրանից բխող գործողությունների ծրագրով սահմանվում է 68 միջոցառում՝ 12 ռազմավարական ուղղություններով, որոնք ներառում են կանխարգելումը, իրավակիրառ գործունեությունը, թմրամիջոցների առցանց ապօրինի շրջանառությունը, կարողությունների զարգացումը, միջազգային համագործակցությունը, ինչպես նաեւ ժամանակակից, ապացուցահեն բուժման եւ վերականգնման ծառայությունների տրամադրումը:

- **Վերը թվարկված ոլորտներում եւ ահաբեկչության դեմ պայքարի վերաբերյալ ՄԱԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի բոլոր համապատասխան կոնվենցիաների եւ համապատասխան արձանագրությունների, այդ թվում՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին» Եվրոպայի խորհրդի 2005 թվականի կոնվենցիայի, ինչպես նաեւ «Երեխաների պաշտպանության մասին» 1996 թվականի Հաագայի կոնվենցիայի («Ծնողական պարտականությունների եւ երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման եւ համագործակցության մասին» կոնվենցիա), «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի 2007 թվականի կոնվենցիայի եւ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրության ստորագրում, վավերացում եւ փոխատեղում ազգային օրենսդրության մեջ:**

Հայաստանը Եվրոպայի խորհրդի անդամ է դարձել 2001 թվականի հունվարին եւ այդ ժամանակից ի վեր ստորագրել է Եվրոպայի խորհրդի 83 կոնվենցիա, որոնցից 70-ը վավերացրել է: Հայաստանը ստորագրել եւ վավերացրել է Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին» կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել

2008 թվականի հոկտեմբերի 1-ից: Այն ստորագրել եւ վավերացրել է նաեւ «Ծնողական պարտականությունների եւ երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման եւ համագործակցության մասին» Հաագայի 1996 թվականի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2008 թվականի մայիսի 1-ից: Բացի այդ, այն ստորագրել եւ վավերացրել է «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի 2007 թվականի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 1-ից: Հայաստանը ստորագրել եւ վավերացրել է նաեւ «Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որն ուժի մեջ է մտել 2006 թվականի մայիսի 1-ից:

Հայաստանը ՄԱԿ-ի հանցավորության եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հիմնական այն բոլոր միջազգային փաստաթղթերի կողմ է, որոնք ՄԱԿ-ի պայմանագրային շրջանակի ներքո բաց են վավերացման համար: Հայաստանն ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում սերտ համագործակցություն է ծավալում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կոմիտեի հետ՝ 1267 (1999թ.), 1989 (2011թ.) եւ 2253 (2015թ.) բանաձեւերի շրջանակում: ԻՍԻԼ (ԴԱԵՇ)-ի, Ալ-Քաիդայի եւ դրանց հետ առնչվող անձանց, խմբերի ու կազմակերպությունների վերաբերյալ թարմացված համախմբված ցանկերը պարբերաբար ստացվում, ուսումնասիրվում եւ ստուգվում են Հայաստանի իրավասու մարմինների կողմից՝ դրա ազգային ընթացակարգերը միջազգային հակաահաբեկչական պարտավորություններին համապատասխանեցնելու նպատակով: Ազգային շրջանակը համապատասխանեցվել է միջազգային չափանիշներին, մասնավորապես՝ 2022 թվականին նոր Քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելու միջոցով, որն ահաբեկչության հետ կապված հանցագործությունների համար նախատեսել է արդիականացված մոտեցում:

6.2. Քրեական գործերով դատական համագործակցություն

- **Քրեական գործերով արդյունավետ փոխադարձ օգնությունն**

ապահովող իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակների ամրապնդում:

Հայաստանի եւ ԵՄ անդամ պետությունների միջեւ համագործակցությունը հիմնականում հիմնված է Եվրոպայի խորհրդի առանցքային փաստաթղթերի, մասնավորապես՝ 1957 թվականի դեկտեմբերի 13-ի Հանձնման մասին եվրոպական կոնվենցիայի եւ դրա լրացուցիչ արձանագրությունների, 1972 թվականի մայիսի 15-ի «Քրեական գործերով վարույթների փոխանցման մասին» եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաեւ 1959 թվականի ապրիլի 20-ի «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի եւ դրա լրացուցիչ արձանագրությունների վրա:

Քրեական գործերով այլ պետությունների հետ դատական համագործակցությունն ազգային մակարդակում կարգավորվում է Քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ եւ 54[1]-րդ գլուխներով, որոնք սահմանում են հանձնման, փոխադարձ իրավական օգնության եւ քրեական վարույթներով միջազգային համագործակցության այլ ձեւերի իրավական շրջանակը: Քրեական գործերով միջազգային փոխադարձ իրավական օգնությունը կարգավորվում է նաեւ 2024 թվականի նոյեմբերի 15-ին ընդունված «Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» օրենքով:

Միասին վերցված՝ դրանք ձեւավորում են համապարփակ իրավական շրջանակ, որը հնարավորություն է տալիս Հայաստանին գործընկեր երկրների հետ համագործակցել քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության շրջանակում:

- **Համապատասխան միջազգային կոնվենցիաների եւ դրանց արձանագրությունների, մասնավորապես՝ «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության եւ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին»**

Եվրոպայի խորհրդի 2005 թվականի կոնվենցիայի ստորագրում, վավերացում եւ փոխատեղում ազգային օրենսդրության մեջ:

«Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրությունը ստորագրվել եւ վավերացվել է Հայաստանի կողմից: Այն ուժի մեջ է մտել 2011 թվականի ապրիլի 1-ին: Ազգային օրենսդրությունը համապատասխանեցվել է այդ Արձանագրությանը: Բացի այդ, 2026 թվականին Երրորդ լրացուցիչ արձանագրության վավերացման եւ իրականացման նպատակով նախաձեռնվել են ներքին ընթացակարգեր:

Հայաստանը ստորագրել եւ վավերացրել է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2008 թվականի հոկտեմբերի 1-ին:

6.3. Իրավապահ ոլորտում համագործակցությունը

- **Իրավասու պետական գերատեսչությունների միջեւ արդյունավետ համակարգման մեխանիզմների ներդրում եւ ընդհանուր տվյալների բանկի (ՏՏ համակարգի) ստեղծում՝ նախատեսելով համապատասխան պաշտոնատար անձանց ուղղակի մատչելիության իրավունքը:**

Հայաստանի իրավապահ մարմինները մատչելիություն ունեն տվյալների թվային աղբյուրների լայն շրջանակի, որոնք ներառում են իրավապահ ոլորտի, բնակչության հաշվառման, միգրացիայի, սահմանների կառավարման եւ միջազգային համագործակցության վերաբերյալ տվյալներ: Այնուամենայնիվ, բազմաթիվ համակարգերում այդ տվյալներին մատչելիությունը եւ դրանց օգտագործումը շարունակում են լինել մասնատված՝ սահմանափակ փոխգործակցելիությամբ: Տվյալները հիմնականում օգտագործվում են ռեակտիվ

կերպով եւ ըստ կոնկրետ դեպքի՝ պրոակտիվ կամ հետախուզության տվյալների վրա հիմնված մոտեցումների սահմանափակ կիրառությամբ: Ոչ բավարար օպերատիվ համակարգումը եւ օպերատիվ գործնական պլանավորման թերությունները շարունակում են մարտահրավեր լինել Հայաստանի քննչական մարմինների համար:

Այս ոլորտում հետագա առաջընթացը հնարավոր կլինի Բնակչության հաշվառման պետական միասնական ռեգիստրի լիարժեք ներդրմամբ (նախատեսվում է 2027 թվականի հունվարի 1-ին) եւ տեղեկատվական համակարգերի միջեւ առավել մեծ փոխգործակցելիությամբ՝ հիմնվելով Ներքին գործերի նախարարության կազմում գործող նորաստեղծ Հանցավորության վիճակագրության եւ հետազոտական կենտրոնի վրա:

Դատաիրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությամբ սահմանվում են նաեւ մինչդատական քրեական վարույթների քրեական գործերի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման ծրագրեր (էլ. քրեական գործ): Այս բարեփոխումը կլինի Կառավարության կողմից քրեական արդարադատության համակարգն արդիականացնելու եւ այն էլ ավելի արդյունավետ, թափանցիկ եւ հաշվետվողական դարձնելու առավել լայն ջանքերի առանցքային բաղադրիչը: Էլ. գործերի կառավարման համակարգը նախատեսվում է ամբողջությամբ գործարկել մինչեւ 2027 թվականի մարտը:

- **Ինչպես Եվրոպոլի (այդ թվում՝ SIENA համակարգի եւ կապի ապահովման ներկայացուցչի ներգրավման միջոցով), այնպես էլ ՈԵՔ-ի հետ Աշխատանքային համաձայնագրի իրականացման միջոցով արդյունավետ կառուցվածքային համագործակցության ապահովում, ինչպես նաեւ Արեւելյան գործընկերության տարածքում կարողությունների զարգացման տարածաշրջանային նախագծերին շարունակական ակտիվ մասնակցություն:**

2021 թվականի սեպտեմբերին Հայաստանի ոստիկանության եւ Եվրոպոլի

միջեւ ստորագրվել է Աշխատանքային համաձայնագիր, որով հիմք է դրվել հետագա կիրարկող փաստաթղթերի (Կապի ապահովման մասին համաձայնագրի եւ Անվտանգ հաղորդակցության գծի՝ SIENA-ի ստեղծման մասին փոխըմբռնման հուշագրի) համար: Այդ փաստաթղթերը պաշտոնապես ուժի մեջ են մտել 2024 թվականի մայիսին: Հայաստանը Եվրոպոլում նշանակել է կապի ապահովման ներկայացուցիչ եւ փաստացի ներգրավել է նրան 2026 թվականի ապրիլին: Այդ ներգրավմամբ կամրապնդվեն Հայաստանի իրավապահ մարմինների, Եվրոպոլի եւ Եվրոպոլի գործընկերների կապի մյուս ներկայացուցիչների միջեւ հարաբերությունները:

Հայաստանի համագործակցությունը ՈԵՔ-ի հետ հիմնված է 2017 թվականի ապրիլին ստորագրված Աշխատանքային համաձայնագրի վրա: Աշխատանքային համաձայնագրի գործողության ժամկետը պետք է երկարաձգվի՝ ԵՄ տվյալների պաշտպանության վերաբերյալ վերջին օրենսդրությունը հաշվի առնելու համար: 2020 թվականին ՈԵՔ-ի կողմից Արեւելյան գործընկերների համար TOPCOP ծրագրի մեկնարկից ի վեր Հայաստանի իրավապահ մարմինների աշխատակիցները մասնակցել են թմրանյութերի ապօրինի շրջանառության, մարդկանց թրաֆիքինգի, անօրինական միգրացիայի, գույքի դեմ ուղղված կազմակերպված հանցագործությունների, առցանց խարդախության եւ կիբեռհանցագործության թեմաներով բազմաթիվ վերապատրաստման դասընթացների, ինչպես նաեւ ՈԵՔ-ի փոխանակման եւ մենթորական ծրագրերի:

Հանցավոր սպառնալիքների հակազդման եվրոպական բազմապրոֆիլ հարթակի (EMPACT) ազգային համակարգողի նշանակումը զգալիորեն ընդլայնում է ԵՄ-ի կողմից ղեկավարվող գործառական համագործակցության շրջանակներին Հայաստանի ոստիկանության մասնակցությունը:

6.4. Տվյալների պաշտպանությունը

- **Անձնական տվյալների պաշտպանության ոլորտում ներկայումս**

գործող իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակների ամրապնդում եւ դրանց համապատասխանեցում ԵՄ եւ միջազգային չափանիշներին, այդ թվում՝ համապատասխան գործընթացների, գործողությունների եւ ընթացակարգերի կարգավորման նպատակով ենթաօրենսդրական ակտերի, հրահանգների եւ կանոնակարգերի ընդունման միջոցով:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի գործող օրենքն ընդունվել է 2015 թվականի մայիսին: Դրա ընդունումից հետո ընդունվել են Կառավարության որոշումներ՝ անձնական տվյալների մշակման տեխնիկական եւ կազմակերպչական հայեցակետերը կարգավորելու նպատակով: Կառավարության 2021-2026 թվականների ծրագրով ճանաչվում է անձնական տվյալների պաշտպանության ամրապնդման ռազմավարական կարեւորությունը, եւ սահմանվում են այս ոլորտում կարգավորող եւ ինստիտուցիոնալ շրջանակի բարելավմանն ուղղված միջոցառումները: Ներկայումս Հայաստանում տվյալների պաշտպանության ոլորտի հիմնական ազգային կարգավորող մարմինն Արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն է:

2025 թվականի հոկտեմբերին Կառավարությունը հավանության է արժանացրել անձնական տվյալների պաշտպանության նոր եւ անկախ մարմին ստեղծելու ծրագրեր սահմանող հայեցակարգը: Ակնկալվում է, որ այդ մարմնի համար նախատեսված ինստիտուցիոնալ շրջանակը կգործի ամրապնդված օրենսդրության եւ արդիականացված կարգավորող գործելակերպերի հիման վրա՝ ապահովելով քաղաքացիների անձնական տվյալների առավել մեծ պաշտպանություն եւ առավել արդյունավետ կիրարկման մեխանիզմներ՝ տվյալների պաշտպանության եվրոպական սկզբունքներին համապատասխան: Նոր օրենքի ընդունումն Ազգային ժողովի կողմից նախատեսվում է 2026 թվականի 4-րդ եռամսյակում, իսկ նոր Անձնական տվյալների պաշտպանության մարմինը նախատեսվում է ստեղծել 2027 թվականի կեսերին:

- **Համապատասխան միջազգային կոնվենցիաների, արձանագրությունների եւ առաջարկությունների, այդ թվում՝ ««Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի վերահսկիչ մարմինների եւ տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ» լրացուցիչ արձանագրության (ԵՊՇ 181), «Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիան փոփոխող 2018 թվականի արձանագրության (ԵԽՊՇ թիվ 223) եւ Ոստիկանության ոլորտում անձնական տվյալների օգտագործումը կարգավորող՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R(87)15 առաջարկության փոխատեղումն ազգային օրենսդրության մեջ:**

Հայաստանը ստորագրել եւ վավերացրել է Լրացուցիչ արձանագրությունը (ԵՊՇ թիվ 181), որն ուժի մեջ է մտել 2012 թվականի սեպտեմբերին: Հայաստանը 2019 թվականի հոկտեմբերին ստորագրել է նաեւ 108+ կոնվենցիան ու այն վավերացրել է 2022 թվականի հունվարին:

Հայաստանի իշխանությունները մտադիր են ընդունել օրենսդրական փոփոխություններ՝ ապահովելու համար, որ տվյալների պաշտպանության ազգային շրջանակը ներդաշնակեցվի եվրոպական ամենավերջին չափանիշներին եւ միջազգային լավագույն գործելակերպերին, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի 108+ կոնվենցիայից, դրա արձանագրություններից եւ Եվրոպայի խորհրդի՝ իրավապահ ոլորտի նկատմամբ կիրառելի համապատասխան փաստաթղթերից բխող չափանիշներին:

- **Համապատասխան լիազորություններով եւ պարտավորություններով օժտված՝ Անձնական տվյալների պաշտպանության անկախ վերահսկող մարմնի ստեղծում:**

Հայաստանի տվյալների պաշտպանության ներկայիս ազգային մարմինը՝

Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը, գործում է որպես առանձին ստորաբաժանում Արդարադատության նախարարության կառուցվածքում: Հետեւաբար այն չի կարող համարվել տվյալների պաշտպանության վերահսկող մարմնի անկախությանը վերաբերող պահանջներին եւ չափանիշներին համապատասխանող մարմին:

Վերեւում նշված եւ Կառավարության կողմից 2025 թվականի հոկտեմբերին հավանության արժանացած հայեցակարգով նախատեսվում է ստեղծել անձնական տվյալների պաշտպանության անկախ մարմին: Նախատեսվող մոդելը երեք հանձնակատարներից բաղկացած կոլեգիալ մարմին է, որը լիազորված է իրականացնելու վարույթներ եւ քննություններ, ընդունելու շտկիչ միջոցներ եւ պետական հաստատություններին եւ մասնավոր կազմակերպություններին տրամադրելու փորձագիտական խորհրդատվություն:

Անկախ մարմնին ներկայացվող պահանջը բխում է 108 կոնվենցիայից եւ 108+ կոնվենցիայից, սակայն նաեւ Հայաստանի կողմից ստանձնված հանձնառություններից, մասնավորապես՝ ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ 2024 թվականի ապրիլին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական միության միջեւ Հայաստանի Հանրապետության քրեական վարույթներով իրավական համագործակցության ոլորտում իրավասու մարմինների եւ Եվրոպական միության քրեական արդարադատության ոլորտում համագործակցության գործակալության (Եվրաջասթ) միջեւ համագործակցության մասին» համաձայնագրի համատեքստում: Այդ հանձնառություններով պահանջվում է, որ Հայաստանը ստեղծի տվյալների պաշտպանության անկախ մարմին, որը կունենա երաշխավորված անկախություն, բավարար ռեսուրսներ եւ արդյունավետ լիազորություններ:

Տվյալների պաշտպանության նոր մարմնի լիազորությունները պետք է հստակ տարբերակվեն ներկայումս պետական տեղեկատվական համակարգերի

կառավարման համար ներկայումս պատասխանատու Տեղեկատվական համակարգերի գործակալության լիազորություններից, եւ նախատեսվում է այն վերափոխել կիբեռանվտանգության եւ տվյալների կառավարման համար պատասխանատու նոր մարմնի:

Հաշվի առնելով վերոնշյալը, ավելի ուշ փուլում՝ նախատեսված օրենսդրական փոփոխությունների ընդունումից ու իրականացումից եւ Տվյալների պաշտպանության նոր մարմնի ստեղծումից հետո, պետք է իրականացվի Հայաստանի անձնական տվյալների պաշտպանության շրջանակի համապարփակ գնահատում:

Վերոնշյալ եզրակացությունների հիման վրա առաջարկվում է, որ **հասարակական կարգի եւ անվտանգության** հետ կապված (առաջին փուլ) 3-րդ հիմնական ուղղության հենանիշերի առնչությամբ Հայաստանի իշխանությունները՝

<u>Կազմակերպված հանցավորության կանխարգելում եւ դրա դեմ պայքար</u>

- *ընդունեն հանցագործությունների կանխարգելման ռազմավարություն՝ դրա հարակից գործողությունների ծրագրի հետ միասին: Ռազմավարությամբ պետք է անդրադարձ արվի ինչպես կանխարգելման, այնպես էլ հակազդման հայեցակետերին, այդ թվում՝ իրավապահ գերատեսչությունների միջեւ օպերատիվ համագործակցությանը, եւ այն պետք է ընդգրկի կազմակերպված հանցավորության դեմ պայքարը,*

- *շարունակեն հետախուզության տվյալների վրա հիմնված ոստիկանական մոդելի ներդրման միջոցով զարգացնել ծանր եւ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում վերլուծական կարողությունները՝ նպատակ ունենալով մշակել այնպիսի հուսալի եւ համապարփակ իրավիճակային իրազեկման շրջանակ, ինչպիսին է ծանր եւ կազմակերպված հանցավորության սպառնալիքի ազգային գնահատումը*

(ԿՀՍԱԳ),

- *իրականացնեն Եվրոպոլի հետ կնքված Աշխատանքային համաձայնագիրը, այդ թվում՝ SIENA հարթակի միջոցով օպերատիվ տեղեկությունների փոխանակման միջոցով,*

- *ստեղծեն միջինստիտուցիոնալ օպերատիվ հանձնախմբեր՝ կազմակերպված հանցավորությունից տուժող բոլոր ոլորտներում համատեղ օպերատիվ նպատակներ պարբերաբար սահմանելու, համակարգելու եւ իրականացնելու համար,*

- *ստեղծեն եւ գործարկեն ակտիվների վերականգնման հարցերով գրասենյակ՝ հստակ ստանդարտ գործառական ընթացակարգերի միջոցով, հստակ սահմանված մանդատով, բավարար լիազորություններով եւ համապատասխան տեղեկություններին ժամանակին մատչելիությամբ,*

- *ուժեղացնեն կիբեռհանցագործության դեմ պայքարի կարողությունները, այդ թվում՝ նպատակային այնպիսի տեխնիկական գործիքներում ներդրումներ կատարելու միջոցով, ինչպիսիք են ՏՏ ենթակառուցվածքը եւ թվային քրեագիտությունը:*

<u>Կոռուպցիայի դեմ պայքար</u>

- *ընդունեն նոր ազգային հակակոռուպցիոն ռազմավարություն, որն առաջնահերթություն է տալիս կոռուպցիայի նկատմամբ առավել խոցելի ոլորտներին՝ ներառելով ռիսկերի գնահատման հուսալի շրջանակ,*

- *իրականացնեն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի փոփոխությունները եւ ներդնեն կոռուպցիոն ռիսկերի բացահայտման ազգային մեթոդաբանությունը՝ այդպիսով հնարավորություն տալով պետական հաստատություններում եւ համապատասխան մասնավոր հատվածի կազմակերպություններում ներդնելու թիրախային, ռիսկերի վրա*

հիմնված հակակոռուպցիոն միջոցառումներ,

- *Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրեն բավարար ֆինանսական, մարդկային եւ տեխնիկական ռեսուրսներ եւ ամրապնդեն դրա բարեվարքության վերաբերյալ կարծիքների իրականացումը,*

- *արդիականացնեն գույքի հայտարարագրման համակարգը՝ ավտոմատացված գործառույթների ներդրման միջոցով, որոնք հնարավորություն են տալիս կատարելու համակարգված խաչաձեւ ստուգումներ համապատասխան պետական եւ ֆինանսական տվյալների շտեմարանների հետ,*

- *համախմբեն վարքագծի ոլորտային կանոնագրքերը,*

- *ամրապնդեն հանրային հատվածում բարեվարքության մասին իրազեկվածությունը, այդ թվում՝ համակարգված տեղեկությունների եւ ազդարարման մեխանիզմների վերաբերյալ ուսուցման միջոցով,*

- *զարգացնեն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունները՝ դրա՝ ազդարարների պաշտպանության պարտավորությունների կատարման մանդատն իրականացնելու նպատակով,*

- *ապահովեն «Ոստիկանության բարեվարքության եւ կարգապահական կանոնագիրք» նոր օրենքի եւ հարակից ենթաօրենսդրական ակտերի արդյունավետ կիրարկումը,*

- *ամրապնդեն Ներքին գործերի նախարարության նորաստեղծ Ներքին անվտանգության եւ հակակոռուպցիոն վարչության գործառական կարողությունները,*

- *ուժեղացնեն ռազմավարական համակարգումը եւ*

հետախուզական տվյալների փոխանակումն իրավապահ մարմինների միջեւ, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի համակարգման ներքո հստակ գործառական ռազմավարության մշակման միջոցով՝ պայքարելու բարձր մակարդակում կոռուպցիայի դեմ:

<u>Տվյալների պաշտպանություն</u>

- *ստեղծեն եւ գործարկեն տվյալների պաշտպանության հուսալի շրջանակ եւ ստեղծեն անկախ, լիովին գործունակ տվյալների պաշտպանության ազգային մարմին՝ օրենքով սահմանված հստակ մանդատով, ինքնավար կառավարմամբ եւ բավարար մարդկային, տեխնիկական եւ ֆինանսական ռեսուրսներով՝ եվրոպական եւ միջազգային չափանիշներին, այդ թվում՝ ԵՄ Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգին, «Իրավակիրառ գործունեության մասին» ԵՄ հրահանգին, 108+ կոնվենցիային եւ համապատասխան միջազգային ուղեցույցներին համապատասխան,*
- *ապահովեն ապագայում ստեղծվելիք տվյալների պաշտպանության մարմնի եւ Տեղեկատվական համակարգերի գործակալության միջեւ լիազորությունների եւ պարտականությունների հստակ տարանջատումը, որը մոտ ապագայում պատասխանատու է լինելու կիբեռանվտանգության եւ տվյալների կառավարման համար:*

7. Հիմնական ուղղություն 4. Արտաքին հարաբերությունները եւ հիմնարար իրավունքները

7.1. Հայաստանի Հանրապետությունում տեղաշարժվելու ազատությունը

- **Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական բնակվող**

օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց հաշվառումը կարգավորող իրավական շրջանակի բարելավում եւ ամրապնդում:

2025 թվականի հուլիսին ընդունված «Բնակչության պետական ռեգիստրի մասին» լրամշակված օրենքով կարդիականացվեն եւ կմիասնականացվեն Հայաստանի բնակչության ռեգիստրը եւ դրա իրավական շրջանակը: Օրենքով ներդրվում է բնակչության միասնական, կենտրոնացված եւ թվային պետական ռեգիստր, որը ներառում է Հայաստանում օրինական բնակվող բոլոր անձանց, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիներին, քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականներին եւ ապաստան հայցողներին *(տե՛ս վերեւում՝ 3-րդ բաժինը)*: Բնակչության ռեգիստրի մասով օտարերկրյա քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք կօգտվեն նույն իրավունքներից եւ կկրեն նույն պարտականությունները, ինչ Հայաստանի քաղաքացիները, եւ նրանց կտրամադրվեն հանրային ծառայությունների համարանիշներ նույն կարգով, ինչ Հայաստանի քաղաքացիներին: Նոր թվային ռեգիստրը նախատեսվում է, որ կգործի 2027 թվականի հունվարի 1-ից:

7.2. Ճամփորդական եւ նույնականացման փաստաթղթերի տրամադրման պայմանները եւ ընթացակարգերը

- **Իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակների ամրապնդում՝ ապահովելով ճամփորդական եւ անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման արդյունավետ եւ լիարժեք գործունակ համակարգի ստեղծումը՝ առանց որեւէ խտրականության, այդ թվում՝ կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանված անձանց, փոքրամասնություններին պատկանող կամ խոցելի իրավիճակում գտնվող անձանց համար:**

«Անձը հաստատող փաստաթղթի մասին» նոր միասնական օրենքը, որը

ներկայումս վերջնականացման փուլում է, մշակվել է խտրականության բացառման սկզբունքին համապատասխան: Օրենքով կսահմանվի համաձայնեցված եւ ներառական իրավական շրջանակ, որով կկարգավորվի Հայաստանում անձը հաստատող բոլոր փաստաթղթերի տրամադրումն ու օգտագործումը՝ սկսած 2026 թվականի աշնանից *(տե՛ս վերեւում՝ 4-րդ բաժինը)*: Այդ փաստաթղթերն ամբողջությամբ կհամապատասխանեն ԻԿԱՕ-ի չափանիշներին:

Նախատեսված է, որ անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման նոր կենտրոնական գրասենյակները, որոնք նախատեսվում է ամբողջությամբ վերանորոգել, ամբողջությամբ մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այնուամենայնիվ, ապակենտրոնացված գրասենյակներից շատերը ներկայումս մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ավելին, գործող ընթացակարգերը խոչընդոտում են հոգեսոցիալական կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար ամբողջական մատչելիությունը քաղաքացիական կացության եւ փաստաթղթերի հետ կապված ծառայություններին, ինչը ստեղծում է խոցելի եւ մարգինալացված անձանց համար անձը հաստատող փաստաթղթերի արդյունավետ մատչելիությունից զրկվելու ռիսկեր:

7.3. Քաղաքացիների իրավունքները, այդ թվում՝ փոքրամասնությունների պաշտպանությունը

- **ՄԱԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի մշտադիտարկման մարմինների կողմից առաջարկված՝ խտրականության դեմ պայքարի մասին համապարփակ օրենքի ընդունում՝ հավասարությունը խթանելու եւ խտրականության դեմ արդյունավետ պաշտպանություն ապահովելու համար, այդ թվում՝ հավասարության հարցերով հատուկ մարմնի ստեղծում:**

Հայաստանի կառավարությունը պատրաստում է «Խտրականության կանխարգելման եւ խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծ: Հայաստանի իշխանություններից ստացված տեղեկությունների համաձայն՝ դրանով փորձ է արվում կանխարգելել խտրականությունը եւ ապահովել բոլոր անձանց համար հավասար վերաբերմունք եւ հավասար հնարավորություններ իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման գործընթացում, ինչպես նաեւ կանխարգելել խտրականությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Դրանով կսահմանվեն խտրականությունը եւ դրա տարբեր ձեւերը, ինչպես նաեւ կներկայացվի պաշտպանված հատկանիշների ցանկը:

Նախատեսված ինստիտուցիոնալ շրջանակի համաձայն՝ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը կստանձնի Հավասարության հարցերով մարմնի դերը: Դրա լիազորությունը կլինի խտրականության դեմ պայքարի մասին օրենսդրության պահպանման մշտադիտարկումը եւ հավասար վերաբերմունքի խթանումը, խտրականության չենթարկվելու իրավունքի խախտումների կանխարգելումը եւ խտրականության զոհերի իրավունքների պաշտպանությունը:

- **ՄԱԿ-ի եւ Եվրոպայի խորհրդի՝ հավասարությունը խթանող եւ խտրականության դեմ պայքարին անդրադարձող համապատասխան իրավական փաստաթղթերի ստորագրում, վավերացում եւ փոխատեղում ազգային օրենսդրության մեջ՝ «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների եւ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի մշտական առաջարկությունների դրույթների հաշվառմամբ: Քաղաքականությունների ամրապնդում՝ տեղահանված անձանց սոցիալ-տնտեսական ներառումն ապահովելու համար:**

Հայաստանը ՄԱԿ-ի 1951 թվականի Փախստականների մասին կոնվենցիայի եւ դրա 1967 թվականի արձանագրության, «Քաղաքացիություն չունեցող անձանց

կարգավիճակի մասին» 1954 թվականի կոնվենցիայի եւ «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի կոնվենցիայի լիիրավ կողմ է: Այդ փաստաթղթերը Հայաստանին իրավաբանորեն պարտավորեցնում են ապահովել այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են աշխատանքի, բնակարանի, կրթության, սոցիալական աջակցության եւ անձը հաստատող փաստաթղթերի մատչելիությունը տեղահանված եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար: «Քաղաքացիություն չունեցող անձանց մասին» օրենքի նախագիծը ներկայումս գտնվում է վերջնականացման փուլում: Դրանով կարգավորվում է Հայաստանում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման ընթացակարգը, կարգավորվում են արտաքսման ընթացակարգերը, եւ լուծվում են փաստաթղթերի հետ կապված հարցերը՝ Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերին համապատասխան: Օրենքի նախագծով երաշխավորվում են քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները, ազատությունները եւ պարտականությունները՝ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիաներին համապատասխան: Նախագծով սահմանված ամբողջ ընթացակարգով հստակորեն պահպանվում են երեխայի լավագույն շահերի, խտրականության բացառման, հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքի եւ միջազգային չափանիշներին համապատասխանության սկզբունքները:

Հայաստանի կառավարությունը մշակել է «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքի նախագիծ, որը դեռեւս պետք է ընդունվի Ազգային ժողովի կողմից: Դրա նպատակն է երաշխավորել ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը եւ խթանել նրանց ինտեգրումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Օրենքի նախագծի նպատակն է համապատասխանեցնել Հայաստանի օրենսդրությունը Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիային եւ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիային: Եվրոպայի խորհրդի եւ Վենետիկի հանձնաժողովի 2024 թվականի համատեղ կարծիքում արված առաջարկություններից հետո

նախագիծն անցել է լայնածավալ հանրային քննարկումներ: Օրենքի նախագծով երաշխավորվում են ազգային փոքրամասնությունների՝ իրենց ավանդույթները, լեզուն եւ մշակույթը պահպանելու եւ զարգացնելու իրավունքները: Դրանով շեշտադրվում է միջմշակութային երկխոսության եւ հանրային կրթության մեջ փոքրամասնությունների լեզուների ազատ օգտագործման կարեւորությունը: Դրանով սահմանում են նաեւ ազգային փոքրամասնությունների նկատմամբ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները, այդ թվում՝ որոշումների կայացման գործընթացներին նրանց մասնակցությունը դյուրացնելու պարտավորությունները:

Հայաստանը ստորագրել, սակայն դեռեւս չի վավերացրել «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Երկիրն առաջընթաց է գրանցել իր ազգային օրենսդրությունն ու քաղաքականությունը Կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու հարցում:

Հայաստանում երեխաների պաշտպանության իրավական եւ ինստիտուցիոնալ շրջանակներն աստիճանաբար կատարելագործվում են: «Երեխայի իրավունքների եւ երեխայի պաշտպանության համակարգի մասին» 2025 թվականի հոկտեմբերին ընդունված օրենքով ներկայացվում են երեխայի նկատմամբ բռնության, երեխայի բուլինգի, շահագործման եւ անտեսման իրավական սահմանումները, եւ փորձ է արվում սահմանել երեխաների իրավունքների պաշտպանության համապարփակ շրջանակ: Զուգահեռաբար Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների ծրագրի նախագծով (որը դեռեւս պետք է հաստատվի Կառավարության կողմից) եւ Ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2024-2040 թվականների ռազմավարությամբ (հաստատվել է 2024 թվականի հոկտեմբերին) ընդլայնվում է երեխայի պաշտպանության քաղաքականության շրջանակը՝ այն տարածելով բոլոր երեխաների վրա, դուրս գալով խոցելի իրավիճակում գտնվող երեխաների վրա նախկին՝ առավել սահմանափակ ուշադրության սահմաններից:

Առաջարկվող բարեփոխումներով առաջնայնացվում է ոչ թե հաստատությունում տեղավորումը, այլ ընտանեկան եւ խնամատար խնամքը, ընտանեկան բռնության վկա երեխաները ճանաչվում են որպես զոհեր, եւ ամրապնդվում են երեխաների աշխատանքային պաշտպանության միջոցները:

Երեխայի սեռական շահագործման եւ նրա նկատմամբ բռնության դեմ պաշտպանությունն էլ ավելի ամրապնդվեց Հայաստանի կողմից 2020 թվականին «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի վավերացումից հետո: Այդ քայլով առավել հստակ իրավական հիմք ստեղծվեց երեխայի սեռական շահագործման եւ նրա նկատմամբ բռնության դեմ պայքարի համար: Հետագա առաջընթացի համար անհրաժեշտ կլինի ընդունել երեխայի նկատմամբ բռնության եւ սեռական շահագործման կանխարգելման ու դրանց դեմ պայքարի ռազմավարություն, ինչպես նաեւ ստեղծել երեխաների համար հաղորդումներ ներկայացնելու մատչելի, գաղտնի եւ երեխաների համար հարմար մեխանիզմներ՝ բռնության եւ բռնարարքի մասին անվտանգ կերպով հաղորդում ներկայացնելու համար:

Սկզբնական հրատապ աջակցության ցուցաբերումից հետո իշխանությունները զգալի ջանքեր են գործադրել՝ ուղղված Ղարաբաղի ավելի քան 115 000 տեղահանված հայերի երկարաժամկետ ինտեգրմանը: Տեղահանված անձանց շնորհվել է ժամանակավոր պաշտպանության կարգավիճակ, եւ նրանք օգտվել են Կառավարության աջակցության ծրագրերից: Այդ ծրագրերը ներառել են կանխիկ դրամական աջակցություն, վարձակալության եւ կոմունալ ծախսերի հատուցման համար դրամաշնորհներ, բնակարան գնելու համար աջակցություն, ինչպես նաեւ անվճար մատչելիություն կրթությանը, առողջապահությանը եւ սոցիալական ծառայություններին: Վարձակալության եւ կոմունալ ծախսերի հատուցման ծրագիրը մինչեւ 2025 թվականի հունիսը համընդհանուր ծածկույթ էր ապահովում Ղարաբաղի բոլոր տեղահանված հայերի համար, որից հետո այն փոխարինվեց թիրախային աջակցությամբ: Ավելի քան 16

000 տեղահանված երեխա ընդունվել է հայկական դպրոցներ: Իշխանությունները խթանել են նաեւ Հայաստանի քաղաքացիության ձեռքբերումը՝ Ղարաբաղի հայերի համար իրազեկման արշավների եւ քաղաքացիության արագացված ընթացակարգերի միջոցով: Չնայած այդ ջանքերին, տուժած բնակչության երկարաժամկետ ինտեգրումը շարունակում է լուրջ մարտահրավեր լինել:

- **Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար արդար եւ թափանցիկ պայմանների ստեղծում, որը կլուծի նաեւ Հայաստանում հպատակագրման եւ երկքաղաքացիության ձեռքբերման ընթացակարգերի դյուրացման հետ կապված խնդիրները եւ կմեղմի ապագայում առանց վիզաների հնարավոր ռեժիմի չարաշահման ռիսկը: Ձերծ մնալ ներդրողներին քաղաքացիություն շնորհելու ծրագիր մշակելուց:**

«Քաղաքացիության մասին» օրենքում վերջերս կատարված փոփոխություններով, որոնք ուժի մեջ են մտել 2026 թվականի հունվարի 1-ից, թվայնացվել են քաղաքացիություն ձեռք բերելու ընթացակարգի որոշ քայլեր՝ անփոփոխ թողնելով համապատասխանության չափանիշները: Հայաստանի կառավարությունը նախատեսում է այս տարի ընդունել միգրացիայի եւ քաղաքացիության վերաբերյալ ռազմավարություն:

Հայաստանի քաղաքացիություն ձեռք բերելու գործող պայմանները հիմնված են դիմողի՝ հայ հասարակության մեջ ինտեգրման մակարդակի վրա եւ ներառում են բնակության, լեզվի իմացության եւ ընդհանուր գիտելիքների հետ կապված պահանջներ: Այդ պայմանները չեն կիրառվում էթնիկ հայերի նկատմամբ, որոնք օգտվում են հպատակագրման պարզեցված կարգից:

«Քաղաքացիության մասին» գործող օրենքի համաձայն՝ երեք տարվա բնակության պահանջից ազատումները կիրառվում են ազգությամբ հայերի, Հայաստանի քաղաքացիների ամուսինների եւ Հայաստանի քաղաքացիների ծնողների կամ երեխաների նկատմամբ: Քաղաքացիություն կարող է շնորհվել

նաեւ խմբային կարգով՝ հայրենադարձության կամ մեծաթիվ վերադարձերի դեպքերում: Թեեւ օրենքով սկզբնապես արգելվում էր երկքաղաքացիությունը, հետագա փոփոխություններով մասնակիորեն ընդունվեց երկքաղաքացիությունը, մասնավորապես՝ արտերկրում բնակվող հայերի համար:

Գործող օրենսդրական շրջանակը ներառում է հպատակագրման հստակ սահմանված համապատասխանության չափանիշներ, մերժված դիմումների դեպքում իրավական պաշտպանության միջոցների հասանելիություն, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող անձանց եւ երեխաների իրավունքների պաշտպանության երաշխիքներ: Այնուամենայնիվ, Օրենքով բացառիկ դեպքերում շնորհվում են չափազանց լայն հայեցողական լիազորություններ, այն զուրկ է ընթացակարգային թափանցիկությունից եւ պարունակում է երկքաղաքացիության վերաբերյալ երկիմաստություններ, որոնք առաջանում են հին օրենսդրական դրույթների եւ առավել վերջերս կիրառվող գործելակերպի միջեւ անհամապատասխանություններից:

Հայաստանի իշխանությունները վերանայում են նաեւ ներդրումներ կատարելու դիմաց կացության թույլտվություն ստանալու իրավական դրույթները: Գործող իրավական շրջանակով թույլատրվում է էթնիկ հայերին եւ Հայաստանում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող օտարերկրացիներին տրամադրել տասը տարի ժամկետով հատուկ կացության թույլտվություն: Հայաստանը մտադիր չէ ներդնել ներդրողներին քաղաքացիություն շնորհելու ծրագիր:

- **Մարդու իրավունքների վերաբերյալ ազգային ռազմավարության եւ գործողությունների ծրագրի մշակում եւ ընդունում՝ ակտիվորեն պահպանելով ՄԱԿ-ի մարմինների, ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ-ի, Եվրոպայի խորհրդի եւ Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի, ինչպես նաեւ մարդու իրավունքների հարցերով միջազգային այլ մարմինների առաջարկություններն ու չափանիշները, հատկապես՝ հավասարության եւ խտրականության**

դեմ պայքարի, փոքրամասնությունների իրավունքների, անձնական տվյալների պաշտպանության, արդարադատության արդյունավետ մատչելիության եւ կրոնական ազատության վերաբերյալ:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության եւ դրանից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի ժամկետները լրացել են անցած տարվա վերջին: Ռազմավարությունը եւ գործողությունների ծրագիրն ընդգրկում էին ոլորտների լայն շրջանակ, այդ թվում՝ հավասարություն եւ խտրականության բացառում, կրոնական ազատություն, արդարադատության մատչելիություն, խոշտանգումների կանխարգելում եւ առողջության իրավունք: Դրանք մեծապես հիմնված էին այնպիսի միջազգային մարմինների կողմից ներկայացված առաջարկությունների վրա, ինչպիսին են Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների խորհուրդը, Եվրոպայի խորհուրդը եւ ԵԱՀԿ-ն: Մարդու իրավունքների նոր, առանձին ռազմավարություն մշակելու փոխարեն իշխանությունները մտադիր են այս ոլորտը ներառել որպես մեկ հիմնասյուն արդարադատության ոլորտի բարեփոխումների առավել լայն ազգային ռազմավարության մեջ, որը պետք է ընդունվի 2026 թվականի երկրորդ կեսին:

2025 թվականի ապրիլին Հայաստանն ընդունեց գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թվականների ռազմավարությունը: Ռազմավարությունը համապատասխանում է միջազգային չափանիշներին, այդ թվում՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» կոնվենցիային, Պեկինի գործողությունների հարթակին, Կայուն զարգացման նպատակներին եւ Ստամբուլի կոնվենցիային: Ռազմավարությամբ փորձ է արվում ապացուցահեն եւ մասնակցային մոտեցումների միջոցով ապահովել կանանց եւ տղամարդկանց համար հավասար իրավունքներ եւ հնարավորություններ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: 2025 թվականի մայիսին Հայաստանն ընդունել է կանանց, խաղաղության եւ անվտանգության վերաբերյալ 2025-2027 թվականների երրորդ

ազգային գործողությունների ծրագիրը, որը մշակվել է Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի 1325 բանաձեւին համապատասխան:

Արդարադատության մատչելիությունը բարելավելու նպատակով Հայաստանի իշխանությունները մի շարք միջոցներ են ընդունել՝ ուղղված դատական գործերի ծանրաբեռնվածության նվազեցմանը: Այդ միջոցները ներառում են օրենսդրական փոփոխությունները, որոնք թույլ են տալիս որոշ գործեր փոխանցել փաստաբաններին կամ հաշտարարներին, ինչպես նաեւ ավելացնել դատավորների թիվը եւ բարձրացնել դատավորների աշխատավարձերը՝ գործերին ընթացք տալն արագացնելու նպատակով: Դատաիրավական բարեփոխումների շրջանակներում ներդրվել է արդարադատության միասնական էլեկտրոնային համակարգ, որը զգալիորեն կրճատել է քաղաքացիական գործերի կուտակումները: Արբիտրաժի եւ հաշտարարության հայաստանյան կենտրոնը, որը հիմնադրվել է 2023 թվականին, խթանում է վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմները, եւ ընտանեկան իրավունքի գործերի ընտրված կատեգորիաների համար ներդրվել է պարտադիր հաշտարարություն:

Թեեւ այլընտրանքային միջոցներն առավել հաճախ են կիրառվում, մինչդատական կալանքի լայնածավալ կիրառումը շարունակում է մտահոգիչ լինել: 2025 թվականի հոկտեմբերի դրությամբ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 50.8%-ը մինչդատական կալանքի տակ գտնվող անձինք էին: Սա նույնպես քրեակատարողական հիմնարկներում գերծանրաբեռնվածության հիմնական պատճառներից է: Սահմանադրական դատարանի որոշմանը համապատասխան՝ ներկայումս դատարաններից պահանջվում է որոշակի ժամանակահատվածից հետո գնահատել մինչդատական կալանքի անհիմն երկարաձգումը կանխարգելելու ուղղությամբ քննչական մարմինների կողմից ձեռնարկված ջանքերը: Քրեական վարույթներում հոգեբանների դերն ամրապնդվել է, եւ նրանց մասնակցությունն այժմ պարտադիր է

անչափահասների կամ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ գործերով: Հարցաքննությունների տեսաձայնագրումը նույնպես դարձել է պարտադիր՝ քննիչների կողմից համազգեստի վրա կրվող տեսախցիկների օգտագործմամբ:

Հայաստանը 2025 թվականի մայիսին անցել է Համընդհանուր պարբերական վերանայման չորրորդ փուլը: Կառավարությունն ընդունել է ստացված 265 առաջարկությունների մեծ մասը, իսկ 16 առաջարկություն ընդունել է ի գիտություն (այսինքն՝ չի ընդունել): Ռասիզմի եւ անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն իր 2023 թվականի զեկույցում առաջարկել է, որ Հայաստանի իշխանությունները մի շարք ոլորտներում ձեռնարկեն միջոցներ, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի եւ քաղաքացիական հասարակության համապատասխան ներկայացուցիչների հետ համագործակցությամբ աջակցեն հասարակությունում բազմազանության եւ հանդուրժողականության կարեւորության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներին՝ ատելության խոսքի, ատելության շարժառիթով գործադրվող բռնության եւ խտրականության բոլոր ձեւերի կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի նպատակով:

Վերոնշյալ եզրակացությունների հիման վրա առաջարկվում է, որ **արտաքին հարաբերություններին եւ հիմնարար իրավունքներին** (առաջին փուլ) վերաբերող 4-րդ հիմնական ուղղության հենանիշերի առնչությամբ Հայաստանի իշխանությունները՝

- *ապահովեն, որ ֆիզիկական, հոգեսոցիալական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք լիարժեք մատչելիություն ունենան ճամփորդական եւ անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման համակարգին,*
- *ընդունեն «Խտրականության կանխարգելման եւ խտրականությունից պաշտպանության մասին» օրենքը՝ միջազգային եւ*

եվրոպական չափանիշներին եւ Եվրոպայի խորհրդի առաջարկություններին համապատասխան,

- *տրամադրեն խտրականության դեմ պայքարի մասին օրենքի համաձայն հետագայում ստեղծվելիք՝ հավասարության հարցերով մարմնին բավարար եւ կայուն ֆինանսական եւ մարդկային ռեսուրսներ՝ իր մանդատն իրականացնելու համար, այդ թվում՝ քննչական, մշտադիտարկման եւ դատավարության հետ կապված գործառույթների համար,*

- *ընդունեն «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքը, որով ապահովվում են ազգային փոքրամասնությունների՝ իրենց ավանդույթները, լեզուները եւ մշակույթը պահպանելու եւ զարգացնելու իրավունքները՝ հատուկ շեշտադրելով ինչպես հանրային կրթության մեջ փոքրամասնությունների լեզուների ազատ օգտագործումը, այնպես էլ ազգային եւ տեղական մակարդակներում որոշումների կայացման գործընթացներին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների բովանդակալից մասնակցությունը,*

- *Հայաստանի օրենսդրական շրջանակը լիովին համապատասխանեցնեն «Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի դրույթներին եւ ապահովեն անհրաժեշտ իրավական, ինստիտուցիոնալ եւ քաղաքականության միջոցների ընդունումն ու իրականացումը, այդ թվում՝ զոհերի պաշտպանության մեխանիզմները, համապատասխան մասնագետների կարողությունների զարգացումը եւ իրազեկվածության բարձրացմանն ուղղված շարունակական նախաձեռնությունները,*

- *կիրարկեն 2025 թվականի հոկտեմբերին ընդունված «Երեխայի իրավունքների եւ երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքը*

եւ ընդունեն Երեխայի իրավունքների պաշտպանության 2024-2029 թվականների համալիր ծրագիրը՝ ապահովելով, որ բոլոր երեխաները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներն ու այլընտրանքային խնամք ստացող երեխաները պաշտպանված լինեն բռնության բոլոր ձեւերից, այդ թվում՝ թրաֆիքինգից, միջազգային չափանիշներին, այդ թվում՝ Երեխաների պաշտպանության մասին 1996 թվականի Հաագայի կոնվենցիային համապատասխան,

- *մշակել երեխայի նկատմամբ սեռական բռնության եւ երեխայի շահագործման կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի համապարփակ ռազմավարություն՝ «Սեռական շահագործումից եւ սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային համապատասխան՝ ապահովելով տարիքին համապատասխան, մատչելի, գաղտնի եւ երեխային հարմար արդարադատություն, հաղորդումներ ներկայացնելու մեխանիզմների հասանելիություն եւ երեխա զոհերի ու վկաների աջակցություն,*

- *փոփոխեն «Քաղաքացիության մասին» օրենքը՝ էթնիկ հայերի հպատակագրման եւ երկքաղաքացիության հետ կապված չլուծված հարցերը լուծելու համար՝ ապահովելով հստակ երաշխիքների ստեղծում՝ ԵՄ ապագա առանց վիզաների ռեժիմի համատեքստում ցանկացած հնարավոր չարաշահում կանխելու նպատակով,*

- *զերծ մնան ներդրողներին քաղաքացիություն շնորհելու ծրագիր ներդնելուց եւ ապահովեն, որ ներդրողների ռեզիդենտության որեւէ ծրագիր չհանդիսանա քաղաքացիություն ստանալու անօրինական ուղի,*

- *իրականացնեն Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի իրականացման ազդեցության համապարփակ գնահատում եւ մշակեն ու ժամանակին եւ ներառական կերպով ընդունեն հաջորդող*

ռազմավարությունը:

8. Ընդհանուր գնահատումը եւ հաջորդ քայլերը

Սահմանված մեթոդաբանությանը համապատասխան՝ Հանձնաժողովը գնահատել է Հայաստանի կողմից Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի (ՎԱԳԾ) իրականացումը՝ հիմնվելով Հայաստանի իշխանությունների կողմից տրամադրված տեղեկությունների եւ համապատասխան օրենսդրական ու քաղաքականության փաստաթղթերի վրա: Գրասենյակային գնահատումը փոխլրացվել է Հանձնաժողովի ծառայությունների եւ Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության կողմից տեղում իրականացված գնահատմամբ, որին աջակցել են ԵՄ անդամ պետությունների, «Frontex»-ի եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության փորձագետները:

Հանձնաժողովը մշտադիտարկում է նաեւ Հայաստանի կողմից արձանագրված առաջընթացը՝ Հայաստան-ԵՄ մուտքի վիզաների դյուրացման հարցերով համատեղ կոմիտեի, Հայաստան-ԵՄ հետընդունման համատեղ կոմիտեի, Արդարադատության, ազատության եւ անվտանգության հարցերով Հայաստան-ԵՄ ենթակոմիտեի եւ Մարդու իրավունքների երկխոսության միջոցով: Այս բոլոր շրջանակներում ԵՄ-ի եւ Հայաստանի միջեւ առկա է երկխոսության եւ համագործակցության բարձր մակարդակ:

Վերոնշյալի հիման վրա Հանձնաժողովը համարում է, որ Հայաստանը զգալի առաջընթաց է գրանցել ՎԱԳԾ-ի առաջին փուլի (օրենսդրական եւ քաղաքականության շրջանակ) համար կարեւոր հենանիշերի իրականացման գործում՝ հաշվի առնելով, որ այն պաշտոնապես Հայաստանի իշխանություններին է հանձնվել միայն 2025 թվականի նոյեմբերին: 1-ին հիմնական ուղղության (փաստաթղթերի անվտանգություն, ներառյալ՝ կենսաչափական համակարգ) եւ 2-րդ հիմնական ուղղության (միգրացիայի կառավարում) շրջանակներում սահմանված հենանիշերի առաջին խումբն արդեն ակտիվ կատարման փուլում է:

Հայաստանն զգալի առաջընթաց է գրանցում նաեւ ՎԱԳԾ-ի 2-րդ հիմնական ուղղության (սահմանների համալիր կառավարում, ապաստան), 3-րդ հիմնական ուղղության (հասարակական կարգ եւ անվտանգություն) եւ 4-րդ հիմնական ուղղության (արտաքին հարաբերություններ եւ հիմնարար իրավունքներ) շրջանակներում ընդգրկված՝ քաղաքականության մյուս ուղղություններին վերաբերող հենանիշերի առաջին խմբի իրականացման գործում:

Հանձնաժողովի կողմից սույն առաջին ընթացիկ զեկույցի եզրակացությունները կներկայացվեն Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին: Այս եզրակացությունները Հանձնաժողովը նաեւ կներկայացնի Հայաստանի իշխանություններին եւ կքննարկի նրանց հետ՝ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հաջորդ հանդիպման ժամանակ: Հանձնաժողովը կշարունակի աջակցել Հայաստանին ՎԱԳԾ-ի իրականացման գործում, այդ թվում՝ Հայաստանի դիմակայունության եւ աճի մեկնարկող ծրագրի շրջանակներում նախատեսված տեխնիկական եւ ֆինանսական աջակցության միջոցով: Հանձնաժողովն ակտիվորեն կմշտադիտարկի ՎԱԳԾ-ի չորս հիմնական ուղղություններով սահմանված բոլոր հենանիշերի կատարումը՝ ԵՄ անդամ պետությունների փորձագետների աջակցությամբ: Առաջիկա ժամանակահատվածում Հայաստանում կկազմակերպվեն ԵՄ լրացուցիչ գնահատման առաքելություններ՝ առաջին փուլի շրջանակներում բոլոր հենանիշերի կատարման գործում Հայաստանի իշխանությունների կողմից գրանցված առաջընթացը գնահատելու նպատակով: Սույն զեկույցում ներառված առաջարկությունները պետք է ուղղորդեն Հայաստանի իշխանություններին վերհանված բացերը վերացնելու հարցում: Այս մշտադիտարկումը հիմք կհանդիսանա Հայաստանի կողմից ՎԱԳԾ-ի իրականացման գործում գրանցված առաջընթացի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից Եվրոպական պառլամենտին եւ Խորհրդին ուղղված առաջիկա զեկույցների համար: